



"Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում զիփլայնի կառուցում" նախագծի



Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ



Ապրիլ, 2020թ.



**Պատվիրատու
"ՀԿ Կենտրոն" քաղաքացիական հասարակության զարգացման Հասարակական Կազմակերպություն**



**Մշակող
"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ**



ATMS Solutions

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ
Հայաստան, Երևան, 0010
Հանրապետության Հրապարակ
Վ. Սարգսյան 26/3, գրասենյակ 713
Հեռ. +37410 583643, Բջջ. +37499 109495
info@atms.am, www.atms.am



"Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում զիփլայնի կառուցում"

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ տնօրեն

Ա. Տեր-Թորոսյան

22.07.2020թ.



"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ

Հայաստան, Երևան, 0010
Հանրապետության Հրապարակ
Վ. Սարգսյան 26/3, 7-րդ հարկ
Գրասենյակ 713
Հեռ.՝ +37410 583643
Բջջ.՝ +37499 109495
info@atms.am
www.atms.am



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	4
2.	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ.....	5
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՆՏԸ ..5	
5.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	9
5.1	Նախատեսվող գործունեության հողատարածքը.....	10
5.2	Նախատեսվող գործունեության հիմնական փուլերը և հաջորդականությունը	11
5.3	Աշխատանքների իրականացման ժամանակացույցը	11
5.4	Չիփլայնի կառուցման տեխնիկական բնութագիրը	12
5.5	Մթնոլորտային հնարավոր արտանետումները.....	14
5.6	Ջրային ռեսուրսների պահանջի և կեղտաջրերի հաշվարկ	14
5.7	Թափոնների կառավարում.....	15
6.	ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ	15
7.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	16
7.1	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը, ռելիեֆը և լանդշաֆտը	16
7.2	Դսեղի անտառտնտեսությունը և դրա կառուցվածքը.....	17
7.3	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի երկրաբանությունը.....	18
7.4	Հիդրոերկրաբանություն.....	19
7.5	Տարածաշրջանի հողերի նկարագիրը.....	20
7.6	Կլիման և օդերևութաբանական պայմանները	21
7.6.1	Ջերմաստիճանը.....	21
7.6.2	Խոնավությունը	22
7.6.3	Մթնոլորտային տեղումները	22
7.6.4	Քամի	22
7.7	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը	23
7.8	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը.....	27
7.9	Տարածաշրջանի բնության հատուկ պահպանվող տարածքները.....	29
7.10	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ տնտեսական վիճակը	30
7.11	Պատմամշակութային և բնության հուշարձանները.....	31
8.	ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	35
9.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	35
	Հավելվածների մաս.....	39



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1	Պատվիրատու՝	"ՅԿ Կենտրոն" քաղաքացիական հասարակության զարգացման ՅԿ
1.2	Ձեռնարկող՝	"ՅԿ Կենտրոն" քաղաքացիական հասարակության զարգացման ՅԿ
1.3	Փաստացի գործունեության հասցեն և հեռախոսահամարը՝	ՀՀ, ք. Վանաձոր, Խորենացի 6/1 +374 322 43315
1.4	Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Դսեղ համայնքի "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածք (Նկար 1)
1.5	Հիմնական գործունեության տեսակը՝	Էկոտուրիզմ
1.6	Աշխատանքային նախագծի մշակող՝	"ՇԻՆԷՔՍՊԵՐՏ" ՍՊԸ
1.7	Աշխատանքային նախագծի մշակողի հասցեն՝	ՀՀ, ք. Վանաձոր, Թատերական Փ., 8/1-49
1.8	Նախնական գնահատման հայտի մշակող՝	"ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ
1.9	Աշխատանքային նախագծի մշակողի հասցեն և հեռախոսահամարը՝	ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3, գրասենյակ 713, +37410 583643

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՅԿ՝	Հասարակական կազմակերպություն
ԲՀՊՏ՝	Բնության հատուկ պահպանվող տարածք
ԲՊՄՄ՝	Բնության պահպանության միջազգային միություն
ՊՈԱԿ՝	Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

"ՀԿ Կենտրոն" քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպությունը (այսուհետ "ՀԿ Կենտրոն") 2018թ.-ի նոյեմբերից իրականացնում է "Յամայնքահեն Էկոտուրիզմը որպես կայուն ապրուստի միջոց Թումանյանի տարածաշրջանում" ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է Դսեղ համայնքում "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում (Նկար 1) կառուցել զիփլայն: Չիփլայնի կառուցման նպատակն է զարգացնել զբոսաշրջությունը Թումանյան համայնքի տարածաշրջանում:

2014թ.-ի հունիսի 21-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն, ռեկրեացիայի և զբոսաշրջության բնագավառներում՝ ճոպանուղիների գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ Գ կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակների համար սահմանված ընթացակարգով:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրույթային փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Յոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Յոդված 18-ը սահմանում է հիմնադրությամբ փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Յոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչև լուծմանը կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին" թիվ 1325-Ն որոշմամբ:

"Թափոնների մասին" ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի հոկտեմբերի 26-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" հրամանի համաձայն:

"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքը (2006 թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետա-

կան և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

"Մթնոլորտային օդի պահպանության մասին" ՀՀ օրենքը (1994 թ.) կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսություններում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանային նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտերով: Դրանցից են՝ ՀՀ կառավարության "Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին" թիվ 259, "Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու մասին" թիվ 192 և "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՄԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձև գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշումները:

ՀՀ Անտառային օրենսգիրքը (2005 թ.) կարգավորում է Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները: Օրենսգիրքը սահմանում է անտառների սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները (Գլուխ 2), անտառների կառավարման մարմինների իրավասությունները (Գլուխ 3), անտառների դասակարգումը ըստ նպատակային նշանակության (Գլուխ 4): Օրենսգրքի Գլուխ 6-ը նկարագրում է անտառների պետական հաշվառման, անտառային պետական կադաստրի վարման և մոնիթորինգի իրականացման կարգը, Գլուխ 7-ը՝ անտառային տնտեսության վարման կարգը, Գլուխ 8-ը՝ անտառների պահպանության և պաշտպանության, Գլուխ 9-ը՝ անտառավերականգնման և անտառապատման, իսկ Գլուխ 10-ը՝ անտառօգտագործման հիմնադրույթները: Անտառօգտագործման դիմաց վճարներն ու անտառի պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման միջոցառումների ֆինանսավորման հարգը, ինչպես նաև անտառային օրենսդրության խախտումների համար պատասխանատվությունը սահմանված են համապատասխանաբար Օրենսգրքի Գլուխ 13-ում և Գլուխ 15-ում:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի,

տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

"Բուսական աշխարհի մասին" (1999 թ.) ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

"Կենդանական աշխարհի մասին" (2000 թ.) ՀՀ օրենքները սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

"ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին" թիվ 71-Ն և **"ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին"** թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և կենդանիների աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին:

"ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" ՀՀ կառավարության 31.07.2014թ. թիվ 781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

"Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին" թիվ 1059-Ա կառավարության որոշումը ուղղված է բնական միջավայրի, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության, կենսոլորտի բնական վիճակի հավասարակշռության պահպանությանը, բնական գործընթացների ապահովմանը, վտանգների կանխարգելմանը և վերացմանը, գիտական ուսումնասիրությունների և շարունակական մոնիթորինգի, ինչպես նաև կայուն բնօգտագործման, մասնակցային կառավարման և միջոլորտային համագործակցության կազմակերպմանը: Կառավարության որոշման հավելված 1-ի կետ 21-ում եկթակետ 3)-ի համաձայն. Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիայի ներքո Հայաստանում «Էմերալդ» ցանցի ստեղծման ծրագրի շրջանակներում առանձնացվել են նաև Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի մնացորդային լճերը: Դա հնարավորություն է տալիս ապագայում ստեղծել «Լոռու լճեր» պահպանվող լանդշաֆտ:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի "Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 263-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 595-Ն հրամանի հավելված 1-ով սահմանված են հրդեհային անվտանգության կանոնները:

"Հայաստանի Հանրապետության անտառներում հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին" թիվ 589 ՀՀ կառավարության որոշման մեջ ներկայացված է անտառներում գործունեություն ծավալվելու համար անհրաժեշտ հրդեհային անվտանգության կանոնները:

"Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 49-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի պատմամշակութային հուշարձանների ցանկը:


"Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին" թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 05.08.2014թ.-ի **"Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնության հուշարձանների անձնագրերը հաստատելու մասին"** թիվ 218-Ն հրաման:

5. ՆԱԽԱՏԵՍԱԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

"ՀԿ Կենտրոն"-ը 2018թ.-ից իրականացնում է "Համայնքահեն Էկոտուրիզմը որպես կայուն ապրուստի միջոց Թումանյանի տարածաշրջանում" ծրագիրը: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է Դսեղ համայնքի "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում կառուցել զիփլայն, որը նպատակ ունի զարգացնել և զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում պահել Դսեղ համայնքը:

Չիփլայնի ընդհանուր երկարությունը կազմելու է 300 մ և ձգվելու է $X=40.951602$, $Y=44.685030$ կետից մինչև $X=40.950259$, $Y=44.681819$ կետը: Նախատեսվող գործունեության արբանյակային քարտեզը՝ X և Y կոորդինատների նշագրմամբ, բերված է **Նկար 1**-ում, իսկ իրադրային հատակագիծը ներկայացված է **Հավելված 1**-ում:



Նկար 1. Նախատեսվող գործունեության տեղակայման արբանյակային քարտեզը

5.1 Նախատեսվող գործունեության հողատարածքը

Աշխատանքային նախագծով նախատեսվում է Դսեղ համայնքի "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում կառուցել զիփլայն: Չիփլայնի ընդհանուր երկարությունը կազմելու է 300 մ և ձգվելու է $X=40.951602$, $Y=44.685030$ կետից (ելակետ) մինչև $X=40.950259$, $Y=44.681819$ կետը (վերջնակետ): Ելակետը գտնվելու է Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի "Ջայանտառ" ՊՈԱԿ-ի "Դսեղի անտառատնտեսություն" մասնաճյուղի տարածքում, որի տարածքը կազմելու է 0.0441 հա, իսկ վերջնակետը գտնվելու է Դսեղ համայնքի վարչական տարածքում, որի տարածքը կազմելու է 0.01 հա: Ելակետի և վերջնակետի կազմակերպման համար պահանջվող տարածքները հաշվարկվել են հաշվի առնելով զիփլայնի կառուցման և շահագործման անհրաժեշտ մակերեսները: Ստորև **Նկար 2**-ում ներկայացված է զիփլայնի տիպային մոդելը, իսկ զիփլայնի երկայնական կտրվածը ներկայացված է **Հավելված 7**-ում:

"Ջայանտառ" ՊՈԱԿ-ի և Դսեղ համայնքի կողմից ստացված գրությունների համաձայն (**Հավելված 2** և **Հավելված 3**) վերջիններս չունեն առարկություններ իրենց վարչական տարածքներում զիփլայնի ելակետի և վերջնակետի կազմակերպման և ճոպանի անցկացման վերաբերյալ:

Հողամասերի հատակագծերը և կադաստրային ծածկագրերը ներկայացված են **Հավելված 4**-ում և **Հավելված 5**-ում, իսկ նախատեսվող գործունեության տարածքի իրադրային հատակագիծը ներկայացված է **Հավելված 1**-ում:



Նկար 2. Չիփլայնի տիպային մոդելը

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 25.06.2020 թվականին ընդունված թիվ 71 դրական եզրակացության համաձայն (**Հավելված 8**)՝ ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակություն ունեցող 0.01 հա հողամասը փոփոխվել է բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր նշանակության: Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրամադրված դրական եզրակացության հիման վրա 2020 թվականի

հուլիսի 15-ին Դսեղ համայնքի ավագանու կողմից ընդունվել է "Դսեղ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու, վարձակալության պայմանների և վարձակալական վճարի օտարելու թույլտվություն տալու, աճուրդի մեկնարկային գին, մասնակցության վճար և աճուրդի քայլի չափը սահմանելու մասին" թիվ 35 որոշումը (Հավելված 9):

ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ին ընդունված "Պետական անտառները և անտառային հողերը օգտագործման տալու կարգը սահմանելու մասին" թիվ 806-Ն որոշմամբ սահմանված կարգով մրցույթ իրականացնելու համար "ՀԿ Կենտրոն"-ը ներկայացրել է դիմում՝ "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակություն ունեցող 0.01 հա հողամասը մրցույթային կարգով "ՀԿ Կենտրոն"-ին վարձակալությամբ տրամադրելու համար:

Ինչ վերաբերվում է "Հայաստան" ՊՈԱԿ-ին պատկանող 0.0441 հա հողամասին, ապա "Հայաստան" ՊՈԱԿ-ը 2020 թվականի հուլիսի 10-ին կայացած մրցույթի շրջանակներում, իրեն պատկանող 0.0441 հա անտառային հողը, վարձակալության իրավունքով՝ հանգստի գոտի կազմակերպելու նպատակով տրամադրել է "ՀԿ Կենտրոն" ՓԲԸ-ին՝ 20 տարի ժամկետով: Արդյունքում "Հայաստան" ՊՈԱԿ-ի և "ՀԿ Կենտրոնի" -ի միջև կնքվել է պայմանագիր (Հավելված 11), համաձայն որի՝ "Հայաստան" ՊՈԱԿ-ը պարտավորվում է վճարի դիմաց վարձակալության իրավունքով՝ "ՀԿ Կենտրոն"-ին տրամադրել "Հայաստան" ՊՈԱԿ-ին պատկանող 0.0441 հա մակերես ունեցող՝ Դսեղ 4-րդ փողոց 95 հասցեում գտնվող հողամասը:

5.2 Նախատեսվող գործունեության հիմնական փուլերը և հաջորդականությունը

Նախագծի համաձայն, նախատեսվող գործունեությունը իրականացվելու է հետևյալ փուլերով և հաջորդականությամբ՝

1. Փայտե աստիճանների և հարթակների կառուցում,
2. Փայտե աստիճանների և հարթակների լրացուցիչ մշակում և ձևավորում,
3. ճոպանի մոնտաժում և ամրացում:

5.3 Աշխատանքների իրականացման ժամանակացույցը

Նախատեսվող աշխատանքների իրականացման ժամանակացույցը բերված է ստորև Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների իրականացման ժամանակացույցը

№	Հիմնական փուլերը	Ժամանակացույցը ըստ ամիսների			
		1	2	3	4
I	Փայտե աստիճանների և հարթակների կառուցում				
II	Փայտե աստիճանների և հարթակների լրացուցիչ մշակում և ձևավորում				
III	ճոպանի մոնտաժում և ամրացում:				

5.4 Զինվայնի կառուցման տեխնիկական բնութագիրը

Նախագծով նախատեսվում է Դսեղ համայնքի "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում կառուցել 300 մ երկարությամբ զինվայն: Զինվայնի ելակետը գտնվելու է Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի "Յայանտառ" ՊՈԱԿ-ի "Դսեղի անտառտնտեսություն" մասնաճյուղի տարածքում, իսկ վերջնակետը՝ Դսեղ համայնքի վարչական տարածքում:

Զինվայնի կառուցման համար բետոնային հիմքերի իրականացում չի նախատեսվում, քանի որ այն ամրացվելու է ծառաբներից: Զինվայնի ծառաբներից ամրացման տիպային մոդելը բերված է ստորև **Նկար 3**-ում: "Դսեղի անտառտնտեսություն" մասնաճյուղի կողմից կատարված տեղագնման արդյունքում (**Հավելված 6**)՝ 150 մ շառավիղով լույնականացվել է 4 հատ բոխի տեսակի ծառ: Ծառերից երկուսը ծառայելուն են որպես զինվայնի հենակետեր: Զինվայնի կառուցման համար հողային և ծառահատման աշխատանքներ նախատեսված չեն:



Նկար 3. Զինվայնի ծառաբներից ամրացման տիպային մոդելը

Զինվայնի կառուցման համար կիրառվող շինարարական կոնստրուկցիաները և աշխատանքների ծավալները բերված են ստորև **Աղյուսակ 2**-ում:

Աղյուսակ 2. Զինվայնի կառուցման համար կիրառվող կոնստրուկցիաների անվանացանկը և քանակները

Զ/Զ	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Ընդհանուր ծախսը
1	Չատուկ մշակված փայտանյութ՝ փայտե աստիճանների իրականացման համար	մ ² /մ ³	5.4/0.52
2	Փայտե աստիճանների լրացուցիչ մշակում և ձևավորում	մ ³	0.52
3	ճոպան (գալվանապատ, տրամագիծը 12 մմ)	մ	340
4	ճոպանի մոնտաժում	մ	340
5	Չարթակների կառուցում հատուկ մշակված տախտակներից	մ ² /մ ³	23/0.92

Զ/Զ	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Ընդհանուր ծախսը
6	Փայտե աստիճանների լրացուցիչ մշակում և ձևավորում	մ ³	0.92
7	Փայտի ներկում պենտոտեկս նյութով	մ ²	100
8	Փայտի պտուտակ 60 մմ	հատ	300
9	Պողպատե կարաբին մեծ	հատ	8
10	Պողպատե կարաբին փոքր	հատ	8
11	Ճախարակ (12 մմ տրամագծով ճոպանի համար)	հատ	10
12	Մամլիչ հարթակի (փոխանցման՝ 12 մմ)	հատ	8
13	Մամլիչ հարթակի՝ քայլքի (փոխանցման՝ 12 մմ)	հատ	8
14	Շրջակապ շերտապողպատից 40x3	մ	8.8
15	Յեղույս 12 մմ	հատ	100
16	Տափօղակ 12 մմ	հատ	200
17	Պտուտակ 200 մմ	հատ	100
18	Պարան դինամիկ	մ	340

Քանի որ զիփլայնի կառուցման համար բետոնե հիմքերի և առհասարակ բետոնային աշխատանքներ չեն նախատեսվում, հետևաբար հողային աշխատանքներ նույնպես չեն իրականացվելու: Չիփլայնի համար որպես հիմքեր ծառայելու են ծառաբները, որոնց ամրացվելու է ճոպանը: Կառուցման աշխատանքներում շինարարական տեխնիկայի օգտագործում չի նախատեսվում:

Փայտե աստիճանների և ճաղաշարերի պատրաստման, ինչպես նաև փայտի ներկման աշխատանքներն իրականացվելու են ոչ թե նախատեսվող գործունեության վայրում, այլ փայտամշակման արտադրամասում՝ բնության հուշարձանի տարածքի հնարավոր աղտոտումը բացառելու նպատակով:

"Դսեղի ծովեր" բնության հուշարձան մուտք գործելու միակ ճանապարհը տարածքում առկա գրունտային ճանապարհն է, որը ներդաշնակ է տարածքի լանդշաֆտին: Առկա գրունտային ճանապարհի ասֆալտապատում, նոր ճանապարհների և ավտոկայանատեղիների կառուցում չի նախատեսվում:

"Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքը արդեն երկար տարիներ օգտագործվում է ռեկրեացիոն նպատակներով՝ որպես հանգստյան գոտի: Չիփլայնը դիտարկվում է որպես տարածքի հանգստի կազմակերպման բաղադրիչ: Ներկայումս այցելուները, իրենց մեքենաները կանգնեցնում են հողային ճանապարհի եզրին: Բացի այդ ձեռնարկողը նախատեսում է դեպի նախատեսվող գործունեության տարածք մարդկանց այցելությունները կազմակերպել քայլարշավների միջոցով՝ խրախուսելով էկոտուրիզմի սկզբունքները:

"Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում կան աղբամաններ, որոնք զիփլայնի կառուցման աշխատանքներից հետո կհամարվեն: Աղբահանությունը իրականացվելու է 2 շաբաթը մեկ անգամ:

Չիփլայնի ելակետի և վերջնակետի տարածքները ցանկապատվելու են, իսկ գիշերային ժամերին զիփլայնի ճոպանը ամրացվելու է կողպեքով՝ դրա օգտագործումը բացառելու, ինչպես նաև անվտանգության նկատառումներից ելնելով: Չիփլայնը շահագործվելու է մայիս ամսից մինչև



հոկտեմբեր ամիսը՝ 10:00-20:00 ընկած ժամանակահատվածում: Նախատեսվող գործունեության տարածքում էլեկտրամատակարարում չի նախատեսվում:

Չիփլայնի կառուցման և շահագործման արդյունքում "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում զբոսաշրջիկների համար սրճարանների, թեյարանների, արագ սննդի կետերի տեղադրում չի նախատեսվում:

5.5 Մթնոլորտային հնարավոր արտանետումները

Չիփլայնի կառուցման ընթացքում մթնոլորտային արտանետումների միակ աղբյուրն է բեռնատար մեքենան, որը՝ մեկ երթով Վանաձոր քաղաքից մինչև նախատեսվող գործունեության տարածք (ընդհանուր հեռավորությունը մոտ 30 կմ է) է տեղափոխելու փայտե նախապատրաստվածքները, տախտակները, աստիճանները, ճոպանը և այլն: Կարելի է փաստել, որ տվյալ դեպքում մեկ բեռնատարից մթնոլորտային արտանետումները աննշան են և կարող են անտեսվել:

5.6 Ջրային ռեսուրսների պահանջի և կեղտաջրերի հաշվարկ

Չիփլայնի իրականացման համար հարթակի ջրցան չի նախատեսվում՝ հողային աշխատանքների բացակայության հետևանքով: Չիփլայնի անցկացման փուլում ջուրը օգտագործվելու է բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար: Ընդհանուր առմամբ աշխատանքների իրականացման համար ներգրավվելու են 3 բանվոր և 1 վարորդ: Նախատեսվող գործունեության տարածքում աշխատողների սանիտարահիգիենիկ կարիքները հոգալու համար նախատեսվող գործունեության տարածքում տեղադրվելու է բիո զուգարան և լվացարան, որը սպասարկվելու է կապալառու ընկերության կողմից:

Աշխատողների (այդ թվում վարորդների) խմելու և սանիտարահիգիենիկ կարիքների համար անհրաժեշտ ջրապահանջը կազմում է՝

$$W_{\text{ԿՏ}}=0.7 \text{ մ}^3/\text{օր}:$$

Այսպիսով, նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ ընդհանուր ջրօգտագործումը կկազմի՝ $0.7 \text{ մ}^3/\text{օր}$:

Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու և կոմունալ տնտեսական ջրօգտագործման արդյունքում: Կորուստը կազմում է 1.5%, այստեղից կեղտաջրերը կազմում են՝ $0.7 \times 0.985 = 0.69 \text{ մ}^3$ /կառուցման ժամանակահատված:

"Դսեղի ծովեր" բնության հուշարձանը գտնվում է երկարամյա մարդածին ազդեցության ներքո և արդեն երկար տարիներ օգտագործվում է ռեկրեացիոն և զբոսաշրջության նպատակով: Հետևաբար, շահագործման փուլում նախատեսվում է օգտվել տարածքում առկա սանիտարահիգիենիկ հնարավորություններից:

Չիփլայնի կառուցման տևողությունը ընդամենը 4 օր է, որի ընթացքում սանիտարահիգիենիկ կարիքները բավարարելու և սնունդ ընդունելու նպատակով, կապալառուի աշխատողները օրվա մեջ մի քանի անգամ, նախորոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, կապալառուի կողմից տրամադրված մեքենայով կայցելեն Դսեղ համայնքի հաստատություններից որևէ մեկը՝ սանիտարահիգիենիկ պահանջները հոգալու և սնունդ ընդունելու նպատակով:

5.7 Թափոնների կառավարում

Չիփլայնի անցկացման աշխատանքների արդյունքում՝ որպես թափոն առաջանալու են շատ չնչին քանակությամբ փայտի մնացորդներ և կենցաղային աղբ՝ մոտ 10 կգ ընդհանուր զանգվածով, որը աշխատանքների ավարտից հետո կապալառու ընկերությունը կտեղափոխի և կտեղադրի իր շինարարական բազայի աղբամանի մեջ:

6. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

2011թ.-ից ի վեր "ՅԿ Կենտրոն"-ի նախաձեռնությամբ Հայաստանի հյուսիսային տարածաշրջանի համայնքներում (Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի ավելի քան 40 համայնքներ) ակտիվորեն իրականացվում են տարբեր համայնքային զարգացման ծրագրեր, այդ թվում՝ ենթակառուցվածքների հիմնում/վերանորոգում, մասնակցային կառավարման խթանում, համայնքների երիտասարդների հզորացման ծրագրեր և այլն: Ներկայումս "ՅԿ Կենտրոն"-ը իրականացնում է Լոռու մարզի 4՝ Դսեղ, Վահագնի, Դեբեդ և Ձորագյուղ բնակավայրերի զարգացման ծրագրեր՝ Էկոտուրիզմի զարգացման միջոցով: Չարգացման ծրագրերից մեկի՝ "Համայնքահեն Էկոտուրիզմը որպես կայուն ապրուստի միջոց Թումանյանի տարածաշրջանում" ծրագրի շրջանակներում նախատեսվում է Դսեղ համայնքի "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում կառուցել զիփլայն, որը նպատակ ունի Դսեղ համայնքը պահել զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում և դարձնել այն ավելի գրավիչ: Դսեղում զիփլայնի առկայությունը և դրա հետևանքով զբոսաշրջիկների հոսքի ավելացումը կնպաստի այլընտրանքային եկամտի աղբյուրների ստեղծմանը համայնքի բնակիչների համար:

"Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքը արդեն երկար տարիներ օգտագործվում է ռեկրեացիոն նպատակներով՝ որպես հանգստյան գոտի: Չիփլայնը դիտարկվում է որպես տարածքի հանգստի կազմակերպման բաղադրիչ: Ներկայումս այցելուները, իրենց մեքենաները կանգնեցնում են հողային ճանապարհի եզրին: Բացի այդ ձեռնարկողը նախատեսում է դեպի նախատեսվող գործունեության տարածք մարդկանց այցելությունները կազմակերպել քայլարշավների միջոցով՝ խրախուսելով Էկոտուրիզմի սկզբունքները:

"Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում կան աղբամաններ, որոնք զիփլայնի կառուցման աշխատանքներից հետո կհամալրվեն: Աղբահանությունը իրականացվելու է 2 շաբաթը մեկ անգամ:

Չիփլայնի ելակետի և վերջնակետի տարածքները ցանկապատվելու են, իսկ գիշերային ժամերին՝ զիփլայնի օգտագործումը բացառելու նպատակով, զիփլայնի ճոպանը ամրացվելու է կողպեքով: Չիփլայնի տարածքում էլեկտրամատակարարման իրականացում չի նախատեսվում:

Չիփլայնի կառուցման շնորհիվ կկազմակերպվեն մի շարք միջոցառումներ, որոնք ուղղակիորեն կապված կլինեն տարածաշրջանի զարգացման հետ: Դրանցից են՝

- Համայնքում առկա են ձիեր, սակայն վերջիններս չեն օգտագործվում որպես զբոսաշրջային շղթայի օղակ: Ծրագրի շրջանակներում համայնքի բնակիչների համար կկազմակերպվեն ձիարշավների իրականացման դասընթացներ, բնակիչներին կտրվեն համապատասխան

հմտություններ, ինչպես նաև թամբեր, որպեսզի զիփլայնով հետաքրքրված և համայնք այցելող զբոսաշրջիկներին՝ ըստ անհրաժեշտության, տրամադրվեն ձիեր:

- Համայնքում նախատեսված է բացահայտել, քարտեզագրել ագրոտուրիզմի մատուցման համար առավել հարմարեցված ընտանիքները: Այդ ընտանիքների համար կիրականացվեն հատուկ դասընթացներ, ինչպիսիք են՝ մեղվապահության, զբոսաշրջիկների մասնակցությամբ մեղրի, մոշի, մորի այլ հատապտուղների և մրգերի հավաքման և պահածոյացման դասընթացներ, մասնակցություն բերքահավաքին և այլ ագրոտուրիզմին բնորոշ ծառայություններ, որոնք հնարավորություն կտան զիփլայնով պայմանավորված համայնք եկող զբոսաշրջիկներին մատուցել ագրոտուրիստական ծառայություններ:

Զիփլայնի շահագործման շրջանակներում և "ՀԿ Կենտրոն"-ի կողմից իրականացվող բոլոր ծառայություններում ներգրավված են լինելու միայն Դսեղ համայնքի բնակիչները: Հարկ է նշել նաև, որ զիփլայնի համար համայնք այցելող զբոսաշրջիկների թվին զուգահեռ կգարգանան Դսեղում առկա մի շարք ենթակառուցվածքներ, ինչպիսիք են՝ Հ. Թումանյանի տուն-թանգարանը, Դսեղի այցելուների տունը ("Թռչնադիտարան"), դսեղում առկա մի շարք հյուրատներ, որոնք "ՀԿ Կենտրոն"-ի կողմից նույնպես պետք է քարտեզագրվեն և ներկայացվեն զբոսաշրջիկներին: Այս ամենի զարգացմանը զուգահեռ կստեղծվեն նաև նոր ենթակառուցվածքներ և նոր աշխատատեղեր:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

7.1 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը, ռելիեֆը և լանդշաֆտը

Դսեղի անտառտնտեսությունը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածաշրջանում: Տարածաշրջանը գտնվում է Փոքր Կովկասի ռելիեֆի տեկտոնական համալիրում: Այս համալիրը արտահայտված է իրար մոտավորապես զուգահեռ զոնաներով, որոնց համապատասխանում են նեոգեն-չորրորդականում կազմավորված ռելիեֆի կառուցվածքային ձևերը:

Տարածաշրջանի լանդշաֆտային գնահատականը որոշվել է հիմք ընդունելով անտառի բաժանումն ըստ ֆունկցիոնալ նշանակության, համաձայն որի անտառի հողերը բաժանվում են՝ ջրապաշտպան, հակաերոզիոն, բնապահպանական, առևտրային և հանգստյան ու առողջարանային առանձին խմբերի, ընդ որում յուրաքանչյուր ցուցանիշ բաժանվում է կենսատիպերի որոնք են՝ գյուղատնտեսական օգտագործման հողերը, կենդանիների ապրելավայրերը, բնապահպանական օբյեկտները, արտադրական անտառները, ոչ արտադրական հողերը, ռելիկտային ծառուտները, անտառային մշակույթները և այլ հողատեսքեր: Տարածաշրջանի լանդշաֆտի տիպը բնութագրվում է՝ փակ հորիզոնական բաշխվածության (0.5 և բարձր լրիվության հորիզոնական կցվածություն) փակ ուղղահայաց բաշխվածության (0.5 և բարձր լրիվության հորիզոնական կցվածություն) կիսաբաց հավասարաչափ բաշխվածության (0.3-0.4 լրիվության հավասարաչափ բաշխվածության ծառուտներ), կիսաբաց կամային բաշխվածության (0.3-0.4 լրիվության կամային բաշխվածության ծառուտներ), բաց նոսրանտառներ (0.1-0.2 լրիվության), բաց առանձին ծառերի առկայությամբ (ծառուտում պաշարը 3-9 %) և ամբողջությամբ բաց լանդշաֆտի տիպեր:


7.2 Դսեղի անտառնտեսությունը և դրա կառուցվածքը

Դսեղի անտառնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից-հարավ 18 կմ է, արևելքից-արևմուտք՝ 21 կմ: Անտառնտեսությունը հարավ-արևմուտքից 15 կմ երկարությամբ սահմանկցում է Գուգարքի անտառնտեսության Եղեգնուտի անտառապետությանը, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից՝ 4.5 կմ երկարությամբ Լավվարի անտառնտեսության Թումանյանի անտառապետությանը, իսկ հյուսիս-արևելքից՝ Նոյեմբերյանի տարածաշրջանի համայնքային հողերին: Դսեղի անտառնտեսությունը կազմված է 4՝ Մարցի, Դսեղի, Լորուտի և Մոտկորի անտառապետություններից: Ստորև **Նկար 4**-ում ներկայացված են Դսեղի անտառնտեսության անտառապետությունների տեղադիրքը: Լորուտի անտառապետությունը ունի 1902 հա մակերես, որն ամենափոքր անտառապետությանն է և կազմում է ընդհանուր մակերեսի 12.4 %-ը, մեծը՝ Մոտկորի անտառապետությունն է՝ 4831 հա (31.5%-ը), Մարցի անտառապետությունն ունի 4717 հա տարածք (30.8%-ը), իսկ Դսեղի անտառապետությունը՝ 3880 հա տարածք (25.3%-ը):

Դսեղի անտառնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 800-2200 մ բարձրությունների վրա, ընդ որում մինչև 800 մ բարձրության վրա գտնվում է անտառնտեսության 11.7 հա մակերեսը (ընդհանուր անտառածածկ տարածքի 0.01%-ը), 801-1200 մ բարձրությունների վրա՝ 1316.9 հա (9.09%), 1201-1600 մ բարձրությունների վրա՝ 7152.8 հա (49.31 %), 1601-ից բարձր 6023.8 հա (41.59%): Հատկանշական է, որ արտադրական նշանակության անտառների 67.3%-ը գտնվում է 1200-1600մ բարձրությունների վրա:

ԴՍԵՂԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
 ԱՆՏԱՌՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մասշտաբ 1: 120 000



Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

Անտառայնություններ	—	առֆալտապատ ճանապարհներ
Մարց (4717 հա)	- - -	գրունտային ճանապարհներ
Դսեղ (3880 հա)	~~~~~	գետեր
Լորկոտ (1902 հա)	~~~~~	վտակներ
Մտկոր (4831 հա)	▨	բնակավայրեր


Սկար 4. Դսեղի անտառտնտեսության կառուցվածքը

7.3 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի երկրաբանությունը

Դսեղի անտառտնտեսության տարածքները գտնվում են Փոքր Կովկաս լեռնահամակարգի կենտրոնական հատվածում հյուսիսային անտառտնտեսական շրջանում, Գուգարաց լեռնաշղթայի արևմտյան և հարավ-արևմտյան լեռնաբազուկների վրա (բարձր գագաթը՝ Չաթին լեռ - 2244 մ), Մարցագետի ջրահավաք ավազանում: Երկրաբանական տեսանկյունից անտառտնտեսության տարածքը կազմավորվել է մեզոզոյան և միսցենի հրաբխային գործունեության ժամանակա-

շրջաններում: Տարածված են հետևյալ մայր ապարները՝ պորֆիրիտները, տուֆը, կրաքարերը և մերգելները:

Ստորև **Նկար 5**-ում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրերի դիրքը ՀՀ լեռնային համակարգում:



Պայմանական նշաններ

- 6 - Գուգարաց լեռնաշղթա (80 կմ), ամենաբարձր կետը՝ Չատին (2243 մ)
 - 8 - Բովաքարի լեռնաշղթա (80 կմ), ամենաբարձր կետը՝ Բովաքար (3016 մ)
 - 9 - Իջևանի լեռնաշղթա (30 կմ), ամենաբարձր կետը՝ Սառցապատ (2532 մ)
- - նախատեսվող գործունեության վայրը
 - - լեռնաշղթայի ամենաբարձր կետը

Նկար 5. Նախատեսվող գործունեության վայրերի տեղադիրքը ՀՀ լեռնային համակարգում

7.4 Հիդրոերկրաբանություն

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ջրագրական ցանցը պատկանում է Դեբեդ գետի ավազանին, որն զբաղեցնում է 4080 կմ² տարածք: Ջրագրական ցանցը զարգացած է, սակայն բնութագրվում է խիստ անհամաչափ բաշխվածությամբ: Դեբեդ գետի երկարությունը հաշված Փամբակի ակունքից, կազմում է 178 կմ, միջին լայնությունը 15 մ, միջին խորությունը 0.4 մ: Փամբակ գետը սկիզբ է առնում Ջաջուռի թամբոցի արևելյան ստորոտներից՝ 2090 մ բարձրության վրա, իսկ Դեբեդի համակարգում, որը ձևավորվում է Փամբակ և Ձորագետ գետերի միախառնումից, հաշվվում է հարյուրավոր գետակներ, որոնցից մի քանի տասնյակն ունեն 10 կմ և ավելի երկարություն: Ձորագետի, համեմատաբար խոշոր վտակներից են Տաշիրը, Չքնաղը, Ուռուտը, Գարգառը, իսկ Փամբակի վտակներից աչքի են ընկնում Լեռնապատը, Տանձուտը, Ալարեքը:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի գետերի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանց սնումը խառն է, կատարվում է անձրևաջրերի, ձնհալքի և մասամբ ստորերկրյա ջրերի հաշվին, ընդ որում ծալքաբեկորային լեռների շրջանում, որտեղ տարածված են թույլ ջրաթափանց ապարները՝ ստորերկրյա սնումը թույլ է արտահայտված, իսկ հյուսիս-արևմտյան շրջաններում, որտեղ մեծ տարածում ունեն Լորագույն հրաբխային ապարները, գերակշռում է ստորերկրյա սնումը:

Անտառտնտեսության տարածքը պատված է մանր գետակների ցանցով, որոնք ունեն լեռնային բնույթ, սնվում են ստորգետնյա, ձնհալքերի և աղբյուրների ջրերով: Դրանք իրենցից ներկայացնում են տիպիկ լեռնային, արագ հոսքով գետակներ, որոնք պարունակում են զգալի քանակությամբ քարեր և ավազներ: Գետերը ջրառատ չեն, սակայն գարնանը դառնում են սելավատար: Անտառտնտեսության տարածքի միակ խոշոր է գետը Մարցն է, որն ունի 25 կմ ձգվածություն, այն Դեբեդի խոշոր վտակներից է:

7.5 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Դսեղի անտառտնտեսության տարածքի լեռնային ծագման հողերի կազմավորման պրոցեսում կարևոր դեր են խաղում տոպոգրաֆիական պայմանները, որին համապատասխան հաճախակի փոփոխվում է հողերի հիդրոլոգիական ռեժիմը: Վերջինս իր ազդեցությունն է թողնում բուսականության տեսակային կազմի, էռոզիոն պրոցեսների ինտենսիվության և դրանից կախված հողակազմավորման ընթացքի տարբերության, հողերի բազմազանության բնութագրի, նրանց զարգացման և ֆիզիկական ու մեխանիկական կազմի վրա:


Ջյուսիսային կողմնադրության լանջերին ձևավորված լեռնային մուգ շագանակավուն հողերը բավականաչափ հզոր են և անգամ մեծ թեքության լանջերին երբեմն հասնում են 1 մ-ի: Յարավային կողմնադրության լանջերում գերիշխում են բաց գորշավուն հողերը, որոնք բնորոշ են կաղնու և կաղնու-բոխուտային տարբեր տիպի ծառուտներին:

Անտառի տարածման ստորին գոտում (մինչև 1000 մ բարձրություններում) տեղաբաշխված են սննդանյութերով համեմատաբար աղքատ կմախքային հողերը: Այստեղ անտառները ներկայացված են հիմնականում բոխու-ղաժուտային երկրորդային համակեցություններով՝ չորասեր թփուտային տեսակների մասնակցությամբ, որոնք առաջացել են նախկինում կաղնուտների ոչնչացման պատճառով:

Լեռնային դարչնագույն հողերը հանդիպում են մինչև 1700 մ բարձրություններում, որոնցում զարգացած են բոխու, կաղնու, թխկու անտառային զանգվածները: Անտառային գորշ հողերը հիմնականում հանդիպում են 1300-2000 մ բարձրության համեմատաբար չափավոր տաք և խոնավ կլիմայի, լվացվող ջրային ռեժիմի պայմաններում:

Լեռնամարգագետնային հողերը հիմնականում զբաղեցնում են 2000 մ բարձր տարածքները: Այստեղ հողագրունտների ուժեղ խոնավացումը և ցածր ջերմաստիճանը նպաստել է տարախոտային և ընդավոր բուսական խմբավորումների զարգացմանը:

Ինչպես ցույց է տրված ստորև **Նկար 6**-ում՝ նախատեսվող գործունեության տարածքում գերակշռում են շագանակագույն լեռնաանտառային հողերը՝ չոր անտառներով և թփուտներով:



Նկար 6. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի հողերի տիպը

7.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանի կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով: Ձմեռը չափավոր ցուրտ է, ձյան կայուն շերտով: Գարունը խոնավ է, երկարատև: Աշունը չափավոր է, երկրորդ կեսին՝ խոնավ: Միջին տարեկան տեղումների տարեկան քանակը կազմում է 566 մմ: Տարածաշրջանը ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Բնական լանդշաֆտները լեռնանտառներն են: Տարածաշրջանուկ առկա է խիտ անտառածածկույթ:

7.6.1 Ջերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը -22 °C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 36.4 °C, ամենատաք ամսվա միջին ջերմաստիճանը՝ 18.1 °C:

Աղյուսակ 3. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի ալպրդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C											Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Թումանյան	1200	-2.2	-0.7	2.5	7.7	11.8	14.9	17.9	18.1	14.5	9.9	5.1	-0.4	8.3	-22	36

7.6.2 Խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 71%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 65%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 72%:

Աղյուսակ 4. Օդի հարաբերական խոնավությունը, %

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %													Միջին ամսական ժամը 15-ին	
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Թումանյան	64	65	71	69	75	76	71	69	74	76	75	66	71	65	72

7.6.3 Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 566 մմ: Առավելագույնը դիտվում է հունիս ամսին՝ 104 մմ, նվազագույնը հունվար ամսին՝ 18 մմ:

Աղյուսակ 5. Մթնոլորտային տեղումները, %

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը ————— միջին ամսական օրական առավելագույն , մմ												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների											Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր					Դեկտեմբեր
Թումանյան	18	27	38	56	94	104	54	46	36	39	35	19	566	-	-	-
	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

7.6.4 Քամի

Տարածաշրջանում քամիները գերակշռում են հարավային և հյուսիսային ուղղություններով: Ըստ Հիդրոմետ ծառայության օդերևութաբանական կայանների դիտարկումների քամու առավելագույն մեծությունը տատանվում է 18-40 մ/վրկ միջակայքում¹:

¹ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալի գրություն, ուղղված ի պատասխան շրջակա միջավայրի նախարարի 14.05.2020թ.-ի թիվ 2/32/5297-2020 գրությանը

7.7 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը

Տարածաշրջանն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և ծովի մակերևույթից բարձրությամբ: Հյուսիսային Հայաստանի անտառային ֆլորան հիմնականում ներկայացված է Կովկասյան և Բորեալ ֆլորաների տարրերից: Դսեղի տարածաշրջանում հիմնական բուսական տիպը անտառայինն է: Անհամեմատ փոքր տարածքներ են զբաղեցնում չոր նոսր անտառները և ենթալպյան համակենցությունները: Տարածաշրջանում հանդիպում են 45 ընտանիքների 160 տեսակներ, որոնցից 77-ը ծառեր են, 51-ը թփեր և 32-ը կիսաթփեր ու լիանաներ, որոնցից մոտ 80%-ը հանդիպում են անտառտնտեսության տարածքում: Անտառտնտեսության գլխավոր ծառատեսակներն են՝ արևելյան հաճարենին, արևելյան և վրացական կաղնին, բոխին, իսկ ուղեկցող ծառատեսակներն են դաժին, լորին, հացին, սրատերև և դաշտային թխկին և այլ տեսակներ, որոնք մասնակցում են հաճարի և կաղնու խառը կամ բարդ ծառատների կազմավորմանը, իսկ առանձին դեպքերում ձևավորում են միատարր փոքր ծառատներ:

Ժայռոտ մերկացումներում, քարերի արանքից բուսում են ենթանտառի թփուտները՝ մասրենի, հոնի, ցաքի, դժնիկի, ալոճենու մացառուտներով և միջին խտության խոտածածկույթով: Սրանց հետ խառը հանդես են գալիս պիստակենի, փոշնի, երբեմն դրախտածառ: Հարթ և բլուր տեղանքներում շատ տարածված է փետրախոտը՝ նեղտերև և պոնտոսյան տարատեսակներով: Դրա հետ աճում են փրփրուկը, սղոցուկը, բավեղը, իշակաթնուկը: Տարածաշրջանի բուսականության տիպային քարտեզի համաձայն (Նկար 7) նախատեսվող գործունեության տարածքում գերակշռում են հաճարենու անտառները և նոսրանտառները (հաճարենի, կեչի, կաղնի)՝ բարձրախոտի և մարգագետինների կոմպլեքսով:



- 15 Հաճարենու անտառներ
- 20 Նոսրանտառուտներ (հաճարենու, կեչու և կաղնու), բարձրախոտի և մարգագետինների կոմպլեքսով
- Նախատեսվող գործունեության վայրերը

Բուսականության տիպերի քարտեզ



Նկար 7. Նախատեսվող գործունեության տարածքի բուսականության տիպային քարտեզ

"Դսեղի անտառտնտեսության կառավարման պլան"-ի համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածաշրջանում Կարմիրգրքյան բուսատեսակներ չկան: Սակայն ՀՀ Կարմիր գրքի տվյալների համաձայն՝ Դսեղի և Թումանյանի տարածաշրջանում կան թվով 3 Կարմիրգրքյան բուսատեսակ, որոնք ներկայացված են ստորև Աղյուսակ 6-ում, իսկ դրանց լուսանկարները՝ Նկար 8-ում:

Աղյուսակ 6. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակները

№	Բուսատեսակներ		ԲԴՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ²
	Հայերեն	Լատիներեն	
1	Յուրինիա չնկատված	<i>Jurinea praetermissa</i> Galushko & Nemirova	EN
2	Պսեֆելուս դեբեդի	<i>Psephellus debedicus</i> (Gabrielian) Gabrielian	EN
3	Շնդեղ սսվերային	<i>Colchicum umbrosum</i> Stev	CR



Շնդեղ սսվերային - *Colchicum umbrosum* Stev



Պսեֆելուս դեբեդի - *Psephellus debedicus* (Gabrielian) Gabrielian



Յուրինիա չնկատված - *Jurinea praetermissa* Galushko & Nemirova

Նկար 8. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակների լուսանկարները

² EN (*Endangered*) - վտանգված տեսակ

CR (*Critically endangered*) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ

Տարածաշրջանում կան շատ բուսատեսակներ, որոնք օգտագործվել են ավանդական բժշկության մեջ, որոնց մեծ մասը ներկայումս ևս դեղամիջոցների պատրաստման հումք են հանդիսանում, իսկ որոշ տեսակներ էլ՝ տեխնիկական հումք են կարևոր արտադրանքների պատրաստման համար: Ստորև Աղյուսակ 7-ում և Աղյուսակ 8-ում ներկայացված են տարածաշրջանում հանդիպող դեղաբույսերը և ուտելի բուսատեսակները:

Աղյուսակ 7. Տարածաշրջանում հանդիպող ուտելի բուսատեսակները

№	Հավերեն անվանումը	Լատիներեն անվանումը
1	Քեմոն սովորական	Carum carvi
2	Բող տափակապտուղ	Caucalis platycarpus
3	Շուշան-բանջար ոսկեգօծ	Chaerophyllum aureum
4	Շուշան-բանջար սոխուկավոր	Chaerophyllum bulbosum
5	Գինձ, համեմ ցանովի	Coriandrum sativum
6	Գազրուկ, գազար վայրի	Daucus carota
7	Բալդրդան, խնկեղեգային	Heracleum chorodanum
8	Բալդրդան, առաջնասիական քեղ	Heracleum antasiaticum
9	Բալդրդան Սոսնովսկու	Heracleum sosnowskyi
10	Մալբարայլա թավշածաղկավոր	Malabaila dasyantha
11	Մոշխոտ քարեբեկ, անիսոն	Pimpinella saxifraga
12	Աղավնարոտ դեղատու	Verbena officinalis
13	Սոխ տարօրինակ	Allium paradoxum
14	Դաշտասխտոր կլոր	Allium rotundum
15	Ատամնախոտ հնգատերև	Dentaria quinquefolia
16	Կոտեմ լայնատերև, նվարդակ	Lepidium latifolium
17	Աղբակոտեմ	Lepidium ruderales
18	Իշակաթնուկ վրացական	Euphorbia iberica
19	Կտկենի ուտելի	Sambucus edulus
20	Չիրակ սովորական, խնկածաղիկ	Origanum vulgare
21	Սնդրիկ հոտավետ	Polygonatum odoratum
22	Ս. հարթ	P. glaberrimum
23	Գայլուկ փաթաթվող	Humulus lupulus
24	Բողկուկ վայրի, սուտ բողկ	Raphanus raphanistrum
25	Մանդակ արևելյան	Astrodaucus orientalis
26	Ավելուկ ձիու	Rumex confertus
27	Ավելուկ վահանաձև	Rumex scutatus
28	Ավելուկ գանգուր	Rumex crispus
29	Թրթնջուկ փոքր	Rumex acetosella
30	Մառուլ վայրի, հազար վայրի	Lactuca serriola
31	Սինձ մեծ, այծեմորուս	Tragopogon pratensis
32	Ծնեբեկ օղակաձև	Asparagus verticillatus
33	Տափուրոռ պալարակիր	Lathyrus tuberosus
34	Իշամառուլ խորդուբորդ	Sonchus asper
35	Ուրցադաղձ գլխիկավոր	Ziziphora capitata

Աղյուսակ 8. Տարածաշրջանում հանդիպող դեղաբույսերը

№	Հավերեն անվանումը	Լատիներեն անվանումը
1	Եղեսպակ դեղատու	Salvia sclarea L.
2	Կանթեղախոտ մեծ	Chelidonium majus L.
3	Առյուծագի սրտային	Leonurus cardiaca L.
4	Դժնիկ լուծողական	Rhamnus cathartica L.
5	Տատրակ-խոճկորիկ սովորական	Tussilago farfara L.
6	Հազարատերևուկ սովորական	Achillea millefolium L.
7	Եղինջ երկտուն	Urtica Dioica L.
8	Խատուտիկ դեղատու	Taraxacum officinale Wigg.
9	Ձիաձետ դաշտային	Egusetum arvense L.
10	Կատվալեզու երեքնուկ	Bidens tripartita L.
11	Խնկածաղիկ դեղատու	Origanum vulgare L.
12	Փիփերթ սովորական	Malva silvestris L.
13	Թելուկ շահիպեխ	Chenopodium botrys L.
14	Մարիամ խոտ	Teucrium polium L.
15	Մղամուճ սպիտակ	Viscum album L.
16	Մատիտեղ հավկտենի	Polygonum nodosum Pers.
17	Թրնջխոտ դեղատնային	Melissa officinalis L.
18	Խնդակոթ բժավոր	Conium maculatum L.
19	Ավելուկ, թրթնջուկ ալպիական	Rumex alpinus L.
20	Վարազափուշ սովորական	Carlina vulgaris
21	Օշինդր սովորական	Artemisia vulgaris L.
22	Մարգացնձու	Peucedanum Luxurians
23	Ղանձլամեր Լոբելի	Veratrum lobelianum Bernch

Դաշտային ուսումնասիրություններ

Ըստ նախատեսվող գործունեության տարածքում իրականացված դաշտային ուսումնասիրության արդյունքների, "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում հավաքագրվել և որոշվել են բույսերի 77 տեսակ, որոնք պատկանում են բարձրակարգ անոթավոր բույսերի 66 ցեղի և 36 ընտանիքի: Նշված 77 տեսակներից մեկը պատկանում է Ձիաձետանմանների, մնացած 76 տեսակները՝ ճածկասերմավորների դասերին: Տեսակների ամենամեծ քանակությունը հայտնաբերվել է Վարդագգիների (13 տեսակ), Հովանոցագգիների, Լոբագգիների (6 տեսակ), Շրթնածաղկավորների (6 տեսակ), Բարդածաղկավորների (4 տեսակ), Ցախակեռասագգիների (4 տեսակ), Ուռենագգիների (4 տեսակ), Խաչածաղկավորների (3 տեսակ), Հացագգիների (3 տեսակ) և այլ ընտանիքների կազմում: Տարածքում մեծ զարգացում ունեն աղբաբույսերը՝ (Capsella bursa-pastoris - ճտապաշար, Hyoscyamus niger - Բանգի սև), մոլախոտերը (Chenopodium album - Թելուկ սպիտակ) և այլն:

Դսեղ համայնքի "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում զիփլայնի կառուցման համար նախատեսվող տարածքում և դրա շրջակայքում բուսական աշխարհի գնահատման հաշվետվությունը, համապատասխան եզրակացություններով և առաջարկություններով, բերված է սույն ՃՄԱԳ հայտի **Հավելված 10**-ում: Առաջարկվող միջոցառումները ներառված են **Աղյուսակ 12**-ում՝ Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցության մեղմացման միջոցառումների ծրագրում:

7.8 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը

Տարածաշրջանը աչքի է ընկնում կենդանական աշխարհի բազմազանությամբ ու հարստությամբ, որին նպաստում է լեռնային խիստ կտրտված ռելիեֆը, բնական քարանձավների ամպլայոթյունը, խիտ անտառները, ինչպես նաև ջրերի առատությունը: Կենդանական աշխարհից հանդիպում են՝ գորշ արջ, այծյամ, վայրի խոզ, գայլ, աղվես, փորսուղ, նապաստակ, կզաքիս, չափակալ, ոզնի, սկյուռ, անտառային կատու, դաշտամուկ, սողունների, երկկենցաղների, թռչունների, միջատների և բզեզների տեսակներ, իսկ ձկներից բնորոշ են կարմրախայտ, մուրձի, լոբո, բեղլու և այլ տեսակներ:

Տարածաշրջանի հերպետոֆաունան ներկայացնում են հայկական մողեսը (*Lacerta armeniaca*), Նաիրյան մողեսը (*L.nairensis*), հայկական իծը (*Vipera raddei*), տափաստանային իծը (*V. erivanensis*), խայտաբղետ իծանման սահնօձը (*Coluber ravergeri*) և այլ տեսակներ, իսկ ջրամբարների և գետերի շրջակայքում հանդիպում են ջրային լորտուն (*Natrix tessellata*) և սովորական լորտուն (*N. Natrix*):

Թռչուններից հանդիպում են՝ անապատային քարաթռչնակը (*Oenanthe deserti*), գյուղական ծիծեռնակը (*Hirundo rustica*), դաշտային առտուլտը (*Alauda arvensis*), դաշտային ճնճողկը (*Passer montanus*), դաշտային մկնաճուռակը (*Circus cianeus*), եղջերավոր առտուլտը (*Eremophila alpestris*), երգող շահրիկը (*Silvia hortensis*), երկբծավոր արտուլտը (*Melanocorypha bimaculata*), ժայռային ծիծեռնակը (*Ptyonoprogne rupestris*), մոխրագույն ագռավը (*Corvus corone*), սերմնաքաղը (*C. Frugilegus*), սպիտակ խաղտոսիկը (*Motacilla alba*), մեծ ժայռային սիտեղը (*Sitta tephronota*), մոխրագույն շամփրուկը (*Lanius collorio*), լեռնային ձիաթռչնակը (*Anthus spinoletta*), լեռնային վշասարեկը (*Carduelis flavirostris*), խայտաբղետ ճանճորսը (*Ficedula hypoleuca*), սոսնձակեռնեխը (*Turdus viscivorus*) և այլ թռչնատեսակները:

Գետերի իխտիոֆաունան ներկայացնում են արագաշարժը (*Alburnoides bipunctatus*), կարմրախայտը (*Salmo trutta fario*), կողակը (*Varicorhinus capoeta capoeta*), Քուռի բեղլուն (*Barbus lacerta cyri*), Քուռի լերկաճուկը (*Nemachilus brandti*):

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված կենդանատեսակների³ ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 9-ում, իսկ դրանց որոշների լուսանկարները՝ Նկար 9-ում:

Աղյուսակ 9. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Հայերեն	Լատիներեն	
1	Մարգագետնային մողես	<i>Darevskia praticola</i>	VU
2	Ռոստոմբեկովի մողես	<i>Darevskia rostombekovi</i> Darevsky	EN
3	Գառնանգղ	<i>Gypaetus barbatus</i> Linnaeus	VU
4	Գիշանգղ	<i>Neophron percnopterus</i> Linnaeus	EN
5	Սպիտակագլուխ անգղ	<i>Gyps fulvus</i>	VU

³ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրք

⁴ EN (*Endangered*) - վտանգված տեսակ,

VU (*Vulnerable*) - խոցելի տեսակ,

DD (*Data Deficient*) - տվյալների անբավարարություն և այլն

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Հայերեն	Լատիներեն	
6	Օձակեր արծիվ	Circaetus gallicus	VU
7	Ցախաքլորարոս	Accipiter gentilis	VU
8	Փաքր ենթարծիվ	Aquila pomarina	VU
9	Տափաստանային արծիվ	Aquila nipalensis orientalis Hodgson	VU
10	Քարարծիվ	Aquila chrysaetos	VU
11	Գաճաճ արծիվ	Hieraetus pennatus	VU
12	Սապսան	Falco peregrinus Tunstall	VU
13	Կովկասյան մարեհավ	Tetrao mlokosiewiczzi	VU
14	Մարգահավ	Crex crex	VU
15	Կիսասպիտակավիզ ճանճորս	Ficedula semitorquata	DD
16	Գորշ արջ	Ursus arctos Linnaeus	VU



Ռոստոմբեկովի մողես - *Darevskia rostombekovi*
Darevsky



Մարդագետնային մողես - *Darevskia praticola*



Սպիտակագլուխ անգղ - *Gyps fulvus*



Օձակեր արծիվ - *Circaetus gallicus*



Մարգահավ - Crex crex



Կիսասպիտակավիզ ճանճրու - Ficedula semitorquata



Գորշ առջ - Ursus arctos Linnaeus



Գառնակաղ - Gypaetus barbatus Linnaeus

Նկար 9. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող` ԶԶ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող կենդանատեսակներից որոշների լուսանկարները

Դաշտային ուսումնասիրություններ

Դսեղ համայնքի "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում զիփլայնի կառուցման համար նախատեսվող տարածքում և դրա շրջակայքում կենդանական աշխարհի գնահատման հաշվետվությունը` համապատասխան եզրակացություններով և առաջարկներով, բերված սույն ՇՄԱԳ հայտի **Հավելված 10**-ում: Առաջարկվող միջոցառումները ներառված են **Աղյուսակ 12**-ում` Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցության մեղմացման միջոցառումների ծրագրում:

7.9 Տարածաշրջանի բնության հատուկ պահպանվող տարածքները

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Դսեղ համայնքի` "Դսեղի ծովեր" ջրագրական բնության հուշարձանի տարածքում: "Դսեղի ծովեր" բնության հուշարձանը գտնվում է Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք` ուղիղ գծով, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիղաշ լեռնագագաթի (1607.3 մ) հյուսիսային լանջի ափսեաձև գոգավորությունում:

Հուշարձանն իրենից ներկայացնում է երոզիոն ծագման անհոսք լիճ, որի հարավային մասը շրջապատված է թավուտ անտառով: Հիմնականում սնվում է ստորգետնյա քաղցրահամ



աղբյուրներից: Լիճը տեղադրված է ստորին Էոցենի հասակի իպրյան հարկի (55.8-ից մինչև 48.6 մլն տարի առաջ ընկած ժամանակահատված) բաց մոխրագույն հրաբխային արտածին տուֆերի վրա, որոնք փոքր հզորությամբ երիզում են լճի հարավային անտառապատ կողմը: Չմռանը լիճը սառչում է մասամբ, հազվադեպ՝ ամբողջովին: Լճի տեղանքում հնուց եղել են իրարից գրեթե անջատված 3-4 ծանծաղ լճակներ, որոնց ցամաքելուց հետո մնացել են ճահճուտներ:

Լճը ծովի մակարդակից բարձր է 1391 մ, երկարությունը՝ հյուսիսից հարավ մոտ 250 մ է, լայնությունը՝ արևմուտքից-արևելք ամենալայն տեղում մոտ 200 մ է: Լճի հայելու մակերեսը 1.6 հա է, առավելագույն՝ խորությունը 4.5 մ: Բնականին մոտ վիճակում է, գեղատեսիլ, սակայն, աստիճանաբար ծանծաղում է և չափսերով փոքրանում: Նկատվում են մասնակիորեն ճահճացման երևույթներ: Լճի ջուրը մասամբ աղտոտված է և պղտոր:

Պահպանման գոտու ընդհանուր մակերեսը կազմում է 3.0 հա, որից 0.4 հա պետական անտառային հողեր են (Դսեղի անտառտնտեսության, Դսեղի անտառապետության քառ. 3, հատված 8): Սահմանների ընդհանուր երկարությունը 672.6 մ է, հյուսիսից հարավ ձգվածությունը 190 մ է, արևելքից արևմուտք ձգվածությունը 243 մ է:

7.10 Նախատեսվող գործունեության տարածաշրջան սոցիալ տնտեսական վիճակը

Ինչպես նշվեց զիփլայնը կառուցվելու է Դսեղ համայնքի "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում: Ստորև ներկայացված է Դսեղ համայնքի սոցիալ տնտեսական վիճակը, իսկ **Նկար 10**-ում՝ նախատեսվող գործունեության վայրի և մոտակա համայնքների տեղադիրքը:


Դսեղ համայնք

Մակերեսը՝ 39.47 կմ²,

Բնակչությունը՝ 2162 մարդ,

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1250-1300 մ:

Համայնքն ըստ բազմաթիվ հավաստի աղբյուրների, հիմնադրվել է դեռևս մ.թ.ա., որի վերաբերյալ կան գիտական հիմնավորումներ ունեցող տվյալներ: Համայնքի տարածքում կան բազմաթիվ արժեքավոր խաչքարեր, մատուռներ, եկեղեցիներ: Ոռոգման ջուր չունենալու պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ. մթերքների արտադրությունը: Հիմնականում զբաղվում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարաբուստանային և կերային կուլտուրաների մշակությամբ: Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, ձու, բուրդ, մեղր: Խոտի ու խտացված կերի անբավարարության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը: Համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց: Ուսուցչական կազմը՝ 50 ուսուցիչ է: Վերանորոգման կարիք ունի դպրոցի մարզադահլիճը: Բավարար վիճակում չէ դպրոցի ջրի և կոյուղու ցանցը: Համայնքն ունի 1 մշակույթի տուն՝ 250 տեղանոց դահլիճով: Ծենքը վերանորոգված է: Նույն շենքում տեղադրված է գրադարանը, որն ունի 11000 անուն գիրք: Համայնքը չունի մարզահրապարակ: Համայնքում գործում է ըմբշամարտի 2 խմբակ: Նրանց համար կառուցվում է մարզադահլիճ: Համայնքում գործում է մեկ հիվանդանոց: Այն կառուցվել է "Կարմիր Խաչ"-ի միջոցներով:



Նկար 10. Նախատեսվող գործունեության և մոտակա համայնքների տեղադիրքը

7.11 Պատմամշակութային և բնության հուշարձանները

ՀՀ Կառավարության 2004թ. հունվարի 29-ին թիվ 49-Ն որոշմամբ հաստատված՝ Լոռու մարզի հուշարձանների պետական ցուցակի համաձայն, Դսեղ համայնքի տարածքում կան թվով 41 պատմամշակութային հուշարձանախումբ, որոնք ներկայացված են ստորև **Աղյուսակ 10**-ում:

Աղյուսակ 10. Դսեղ համայնքի պատմամշակութային հուշարձանները

Զ/Զ	Հուշարձանի անվանումը	Կառուցման տարեթիվը	Հասցեն	Նշանակությունը՝ հանրապետական/ տեղական	Հավելյալ նշումներ
1	Ամրոց	Ք.ա. 2-1 հզ, միջնադար	Դեբեդ գետի աջ ափին, գյուղից ամ	Հ	
2	Գերեզմանոց	13-14 դդ.	գյուղից 1.5 կմ հս-աե	Հ	
3	Գերեզմանոց	18-20 դդ.	գյուղի հս-ամ եզրին	Տ	
4	Գերեզմանոց	18-20 դդ.	գյուղի մեջ	Տ	
5	Գերեզմանոց	ուշ միջնադար	գյուղի դպրոցի մոտ, Դիտ բլրի ստորոտում	Տ	
6	Գերեզմանոց	ուշ միջնադար	գյուղ մտնող ճանապարհից ձախ, Էլեկտր. ենթակայանի մոտ	Տ	պահպանվել են 10-ի չափ տապանաքարեր
7	Գերեզմանոց "Թոփուկ խաչ"	12-14 դդ.	գյուղից 2-3 կմ հս-աե, Քարինջ տանող ճանապարհին	Հ	
8	Գերեզմանոց "Ճաղկախաչ"	միջնադար	"Թոփուկ խաչի" և "Ծովեր" լճակի	Հ	պահպանվել են կառույցների հիմքեր և մի քանի խաչքարերի


Զ/ Զ	Հուշարձանի անվանումը	Կառուցման տարեթիվը	Հասցեն	Նշանակությունը՝ հանրապետական/ տեղական	Հավելյալ նշումներ
			միջև		կտորներ
9	Գյուղատեղի	միջնադար	"Ծովեր" լճակից հվ-աե, "Կովատեղ" վայրում	Հ	
10	Գյուղատեղի	միջնադար	"Ծովեր" լճակի մոտ, "Չխալի թալա" վայրում	Հ	
11	Գյուղատեղի	միջնադար	"Ծովեր" լճակի մոտ, "Խնձրոխտի" վայրում	Հ	
12	Դամբարանաբլուր	Ք.ա. 2-1 հզ	գյուղի մեջ	Հ	
13	Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	գյուղից 2 կմ աե	Հ	
14	Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	մայրուղուց գյուղ թեքվող ճանապարհի ձախ կողմում, 1-ին կմ-ի վրա	Հ	
15	Եկեղեցի	654 թ.	գյուղի կենտր. հրապարակից հվ	Հ	միանավ դահլիճ, պահպանվել են հիմնապատերը
16	Եկեղեցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ	վաղ միջնադար	գյուղի կենտրոնում, Հովհ. Թումանյանի տուն- թանգարանի մոտ	Հ	վերակառ.՝ 13 դ. և 1900 թ, շրջապատված է քարե ցանկապատով, 1969-ից՝ երկրագիտական թանգարան
17	Խաչքար	11-12 դդ.	գյուղի մեջ	Հ	Գ. Եղիկյանի տան մոտ, պատվանդանի վրա
18	Խաչքար	12 դ.	Սբ. Գրիգոր Բարձրաբաշ վանքի ճանապարհին	Հ	
19	Խաչքար	12-13 դդ.	Սբ. Գրիգոր Բարձրաբաշ վանքի ճանապարհին	Հ	
20	Խաչքար Համլիկի	1247 թ.	Դեբեդի աջ կողմում, Ձաղիձորի ժայռի տակ		
21	Խաչքար	1250 թ.	գյուղի աե կողմում, Քարինջ տանող ճանապարհին	Հ	

Ք/Ք	Հուշարձանի անվանումը	Կառուցման տարեթիվը	Հասցեն	Նշանակությունը՝ հանրապետական/ տեղական	Հավելյալ նշումներ
22	Խաչքար "Սբ. Տերունական", "Սիրուն Խաչ"	1251 թ.	Սբ. Գրիգոր Բարձրաքաչի վանք տանող ճանապարհի աջ կողմում, Մարց ձորի եզրին	Հ	Եռաստիճան պատվանդանի վրա
23	Խաչքար Սբ. Հակոբ	1268 թ.	գյուղից 2 կմ հս-աե, Քարինջ տանող ճանապարհի եզրին	Հ	
24	Խաչքար	1273 թ.	գյուղից 2 կմ հս-աե, Քարինջ տանող ճանապարհի եզրին	Հ	
25	Խաչքար Հայրապետ քահանայի	1274 թ.	գյուղի մեջ	Հ	Ղ. Առաքելյանի հողամասում, պատվանդանի վրա
26	Խաչքար Ոսկի Տիկնա	1283 թ.	գյուղից 2 կմ հս-աե, Քարինջ տանող ճանապարհի եզրին	Հ	կանգնեցրել է Լուսիկը
27	Խաչքար	13 դ.	գյուղի մեջ	Հ	Ե. Թամազյանի տան մոտ
28	Խաչքար	13 դ.	գյուղի հս-ամ եզրին	Հ	հատված
29	Խաչքար	13-14-րդ դդ.	Սբ. Գրիգոր Բարձրաքաչ վանքի ճանապարհին	Հ	
30	Խաչքար	1305 թ.	գյուղի մեջ	Հ	պատվանդանի վրա
31	Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1947 թ.	գյուղի կենտրոնում	Տ	
32	Հուշադրյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1968 թ.	գյուղի մեջ	Տ	
33	Հուշարձան Հովհաննես Թումանյանին	1969 թ.	գյուղի կենտրոնում	Հ	ճարտարապետ՝ Լիպարիտ Սադոյան, քանդակագործ՝ Ղուկաս Չուբարյան
34	Ձիթհան	ուշ միջնադար	գյուղ մտնող ճանապարհի 1 խաչմերուկից 200 մ աե		
35	Մատուռ	10-12 դդ.	գյուղից 1.5 կմ	Հ	ավերված

Հ/Հ	Հուշարձանի անվանումը	Կառուցման տարեթիվը	Հասցեն	Նշանակությունը՝ հանրապետական/ տեղական	Հավելյալ նշումներ
			ամ		
36	Մատուռ Սբ. Գրիգոր	18-19 դդ.	գյուղի հս եզրին, գործող գերեզմանոցում Դիտ վայրում	Հ	ավերված
37	Մատուռ Սբ. Սարգիս	12-13 դդ.	գյուղից 2 կմ հվ-ատ, "Ծովեր" լճակի մոտ	Հ	ավերված
38	Մենհիր	Ք.ա. 2-1 հզ	գյուղ մտնող ճանապարհի 1 խաչմերուկից 200 մ ատ	Հ	
39	Վանական համալիր Սբ. Գրիգոր Բարձրաքաշ	10-14 դդ.	գյուղից 2 կմ հս-ատ, Մարցաշուր գետակի ձախակողմյան ձորալանջի նեղ հարթակի վրա, անտառում	Հ	կիսավեր, կառուցել է Մարծպան Մամիկոնյան իշխանը
40	Վանական համալիր Քառսնից Մանկանց վանք	11-15 դդ.	գյուղի հս-ամ մասում, Դեբեդի կիրճի աջակողմյան լանջին, "Տախտեր" վայրում	Հ	
41	Տուն-թանգարան Հովհաննես Թումանյանի	1939 թ.	գյուղի մեջ	Հ	

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ին թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, Դսեղ համայնքի տարածքում կա միայն մեկ բնության հուշարձան՝ "Դսեղի ծովեր" բնության ջրագրական հուշարձանը:

"Դսեղի ծովեր" բնության հուշարձանին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը "Տրավերտիններ դուլերիտային բազալտներում" երկրաբանական հուշարձանն է, որը գտնվում է Մարց գյուղի տարածքում՝ նախատեսվող գործունեության վայրից 2 կմ հեռավորության վրա: Ստորև **Նկար 11**-ում ներկայացված է "Դսեղի ծովեր" և "Տրավերտիններ դուլերիտային բազալտներում" բնության հուշարձանների տեղադիրքը և իրենց միջև ընկած հեռավորությունը:



Նկար 11. "Դսեղի ծովեր" և "Տրավերտիններ դլերիտային բազալտներում" բնության հուշարձանների տեղադիրքը և իրենց միջև ընկած հեռավորությունը

8. ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՏԱՌՈՒՄՆԵՐ

Ելնելով "Կորոնավիրուս (COVID-19)"-ի տարածման դեմ իրականացվող միջոցառումներից և գործող արտակարգ դրության պայմաններից՝ ՀՀ-ում շինարարական աշխատանքները հարկավոր է իրականացնել ղեկավարվելով ՀՀ պարետի կողմից 2020 թվականի մայիսի 3-ին ընդունված "Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ" թիվ 63-Ն որոշման հավելված 5-ի համաձայն:

Շինարարական հրապարակներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելման ուղղությամբ աշխատանքներն իրականացվում են ըստ երկրում համաճարակային իրավիճակի զարգացման փուլերի: Առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման պարտականությունն ամբողջ ծավալով կրում է գործատուն:

9. ԲՆԱՊԱՅՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՏԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Սույն Հայտում հատկորոշված են ընդհանուր բնույթի բնապահպանական միջոցառումները: Ստորև **Աղյուսակ 11**-ում առաջարկվում է բնապահպանական միջոցառումների ծրագիր, որում ներկայացված են նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում տարաբնույթ մեղմացնող/նվազեցնող գործողություններ/միջոցառումներ:

Աղյուսակ 12-ում բերված է "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում իրականացված բուսական և կենդանական աշխարհի գնահատման աշխատանքների արդյունքում առաջարկվող միջոցառումների ծրագիրը:

Աղյուսակ 11. Բնապահպանական միջոցառումների ծրագիր

Շրջակա և աշխատանքային միջավայրի բաղադրիչներ	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
1. Օդի աղտոտում	Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող բեռնատար մեքենա	Կապալառու	"ՉԿ Կենտրոն"-ի ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
2. Ջրային ռեսուրսներ	Օդերևութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում շինարարական աշխատանքների դադարեցում	Կապալառու	"ՉԿ Կենտրոն"-ի ներկայացուցիչ	
3. Թափոններ և վտանգավոր նյութեր	Առաջացած փայտի մնացորդները և կենցաղային աղբը տեղափոխել շինարարական բազայի տարածք և հանձնել աղբահանող ընկերությանը Փայտի ներկման աշխատանքներն իրականացնել արտադրամասում, այլ ոչ թե նախատեսվող գործունեության տարածքում	Կապալառու	"ՉԿ Կենտրոն"-ի ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
4. Հողի աղտոտում	Յուղի արտահոսքերից խուսափելու նպատակով բեռնատար մեքենայի տեխ. սպասարկումը իրականացնել մասնագիտացված սպասարկման կետերում	Կապալառու	"ՉԿ Կենտրոն"-ի ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
5. Կենսաբազմազանություն	<ul style="list-style-type: none"> Աշխատանքների իրականացման ընթացքում չօգտագործել արգելված թունաքիմիկատներ, Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան, հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որոշման դրույթների հիման վրա: 	Կապալառու	"ՉԿ Կենտրոն"-ի ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
6. Արտակարգ իրավիճակներ	<ul style="list-style-type: none"> Դսեղ համայնքում բուժկենտրոնի նույնականացում՝ վնասվածք ստացած աշխատողներին հրատապ բուժօգնություն ցուցաբերելու համար, Մինչ աշխատանքների մեկնարկը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդը, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, Պահպանել անտառում հրդեհային անվտանգության կանոնները՝ ՀՀ կառավարության թիվ 589 որոշման համաձայն, Մինչ աշխատանքների մեկնարկը շինարարական հարթակը և 	Կապալառու	"ՉԿ Կենտրոն"-ի ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ

Շրջակա և աշխատանքային միջավայրի բաղադրիչներ	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
	<p>տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով,</p> <ul style="list-style-type: none"> Բոլոր աշխատողներին տրամադրել անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ հատուկ հագուստ, հատուկ կոշիկներ, սաղավարտ: Յնարավոր վնասվածքների դեպքում տուժածին ցուցաբերել առաջին բուժօգնություն, ապա, անհրաժեշտության դեպքում, տեղափոխել մոտակա բժշկական հաստատություն: 			
7. Հակավիրուսային միջոցառումներ	<ul style="list-style-type: none"> Հրահանգավորել աշխատողներին հակավիրուսային, ներառյալ COVID-19 վարակից պաշտպանվելու միջոցառումների վերաբերյալ, Տրամադրել աշխատողներին համապատասխան պաշտպանիչ միջոցներ՝ դիմակ, ակտահանիչ և այլ սանիտարահիգիենիկ նյութեր: 	Կապալառու	"ՀԿ Կենտրոն"-ի ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ

Աղյուսակ 12. Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցության մեղմացման միջոցառումների ծրագիր

Շրջակա և աշխատանքային միջավայրի բաղադրիչներ	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
Բուսական աշխարհ	<ul style="list-style-type: none"> Չիփլայնի ճոպանների համար նախատեսված ծառերի բները ծածկել պաշտպանիչ նյութով և յուրաքանչյուր տարի դրանք թարմացնելու հեռանկարով, որպեսզի ծառերը աճման ընթացքում հաստանալով, չենթարկվեն բնիվնասման: №1 և №2 ծառերի շրջակայքում գտնվող մամխի, մոշենիների և մասրենիների թփուտները ցանկապատել, քանի, որ դրանք այլ բույսերի, ինչպես նաև կենդանիների համար հանդիսանում են կենսաբազմազանության պահպանման կղզյակներ: 	Կապալառու	"ՀԿ Կենտրոն"-ի ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ
Կենդանական աշխարհ	<p>Միջատներ</p> <ul style="list-style-type: none"> Իրականացնել անողնաշար կենդանիների կենսաբազմազանության հետագա վիճակի մոնիթորինգ՝ այդ թվում հետազոտությունների քանակական եղանակների կիրառմամբ: 	Կապալառու	"ՀԿ Կենտրոն"-ի ներկայացուցիչ	Ներառված է ծախսերի մեջ

Շրջակա և աշխատանքային միջավայրի բաղադրիչներ	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
	<p>Ձկներ և երկկենցաղներ</p> <ul style="list-style-type: none"> • Լճի եղեգնապատ ու դրանց հարակից տարածքներում արգելել զբոսաշրջիկների և հանգստացողների ազատ տեղաշարժը, շինարակական աշխատանքները • Իրականացնել միջոցառումներ երկկենցաղների ու դրանց շերտփուկների դրսև ու ոչնչացումը արգելելու համար, • Բացատրական աշխատանքներ տանել զբոսաշրջիկների և տեղացի բնակչության շրջանում երկկենցաղների դրական նշանակության և պահպանության անհրաժեշտության մասին: <p>Ցամաքային ողնաշարավորներ</p> <ul style="list-style-type: none"> • Անհրաժեշտ է հետևել, որպեսզի բնական քարակույտերը չխախտվեն, քանի որ քարերի տեղաշարժի կամ տեղափոխման ժամանակ վնասվում են դրանց տակ կառուցվող ժամանակավոր և մշտական կացարանները, որը բացասաբար է անդրադառնում կենդանիների վրա: 			




"Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում զիփլայնի կառուցում
աշխատանքային նախագիծ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Հավելվածների մաս

Իրադրային հատակագիծ

Հավելված 1





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ԴԱՏԵՂԻ ՀԱՄԱՎՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դատել համայնք, ☒ 1718, հրապարակ 1,
հեռ. (+374)98-01-60-90, էլ. փոստ՝ dsegh.ori@mta.gov.am

0279/09-16
«05» 03.2020թ

Հավելված 2

**«ՀԿ Կենտրոն» ԲՀԶ ՀԿ-ի նախագահ
տիկին Արփինե Հակոբյանին**

Հայտնում եմ Ձեզ, որ Դատելի համայնքապետարանը չի առարկում Դատել համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ 06-035-0142-0009 կադաստրային ծածկագրից առանձնացված 06-035-0142-0072 ծածկագրի 0,01 հա մակերեսով հողամասում «ՀԿ Կենտրոն» ԲՀԶ ՀԿ-ի կողմից «Չիփլայն»-ի կառուցմանը:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Երևան 0047, Ա.Արմենակյան 129

Հեռ. 010/65-37-16, 010/65-02-35

27.03.2008 N 01-08/08

Հավելված 3

Ձեռք _____

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է առ այն, որ «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը չի առարկում «Դսեղի անտառտնտեսություն» մասնաճյուղի Դսեղի անտառպետության թիվ 1 պահաբաժնի 2-րդ քառակուսու տարածքից, վարձակալության իրավունքով 0,0441 հա տարածքում ՀԿ Կենտրոնի կողմից Զիփլայնի կառուցման ծրագրին, քանի որ վերջինիս ընթացքում նախատեսված չեն ծառահատման, անտառային ռեսուրսների օգտագործման, բնական լանդշաֆտի ձևափոխման որևէ աշխատանքներ: Զիփլայնը կառուցվելու է ծառերից ամրակցման եղանակով:

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից անտառային հողերի վարձակալության պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերը «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի «Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին» N 806-Ն որոշմամբ սահմանված կարգով մրցույթ անցկացնելու համար ներկայացվել է Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեին:

Տրվում է ներկայացնելու ըստ պահանջի:

Պաշտոնակատար



Վ. Մացակյան

Տրամադրված է հետևյալ համայնքին
Անուն, ազգանուն

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ
Հողատկազման հիմքը


Լոռու
Մարզ

Հյուսիս
Համայնք

Հասցե




Մասշտաբ 1:200



Հավելված 4

Մակերեսը (հա.)	0.01 (հա.)	Կողորդինատները		Ցանցի համար	Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն ազգանունը (անվանումը)	Գործառնական նշանակությունը (անվանումը)	Կողորդինատները		
		X	Y				X	Y	
Ծածկագիրը	06-035-0142-0009-ից	1	8473215,3348	4535175,0586	6,97	հողամաս		1	
		2	8473215,7064	4535182,0218				2	
		3	8473227,2883	4535181,2481				3	
		4	8473232,0666	4535173,7608				4	
Գործառնական նշանակությունը	գյուղատնտեսական	5			11,61	հողամաս		5	
		6						6	
		7						7	
Հողամասը ծանրաբեռնված է	խտտիարք	8			8,88	ճանապարհ		8	
								16,78	հողամաս



Կատարող Արսեն Իսահակյան (Անուն, ազգանուն)

«ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՈՐԿԱՆԻՅԱԿ» ՏՊԸ
Անհատ Չեռնարկատեր
ԱՅԾ-ի անվանումով

Handwritten signature

Արսեն Իսահակյան (Անուն, ազգանուն) 18.09.2019թ.

Որակավորման վկայականի համարը N_0332 տրման ամիս, ամսաթիվը «14» Մայիսի 2014թ.

Իրավաբանական անձի N 66970821

Տրամադրված է Հայաստանի Հանրապետություն
Անուն, ազգանուն

ՀՈՂԱՄԱՍԻ

ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հողատեղամասի հիմքը


Լոռու
Մարզ

Դսեղ
Համայնք

Հասցե



Մասշտաբ 1:500




Հավելված 5

Մակերեսը (հա.)	0.0441 (հա.)	Կորդինատները		Գծային ընկերություն	Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն ազգանունը (անվանումը)	Գործառնական նշանակությունը (անվանումը)	Կորդինատները	
		X	Y				X	Y
Ծածկագիրը	06-035-0140-0001-ից	1	8473476,6654	4535312,9621	26,89	համայնք	1	
		2	8473497,0471	4535330,5035	16,00	համայնք	2	
		3	8473507,5979	4535318,4715	30,07	համայնք	3	
		4	8473484,8086	4535298,8555	2,92	համայնք	4	
Նպատակային նշանակությունը	անտառային	5	8473484,1452	4535301,7031	4,99	համայնք	5	
		6	8473482,1863	4535306,2971	3,52	համայնք	6	
		7	8473480,2510	4535309,2321	5,17	հողամաս	7	
Հողամասը ծանրաբեռնված է		8					8	

Կատարող _____ Արսեն Իսահակյան (Անուն, ազգանուն)

«ԱՐՍԵՆ ԻՍԱԿԿՅԱՆ ՈՒՍՏՈՒՄ» ՍՊԸ
Անհատ Չեռնարկատեր
ԱՅԵ-ի անվանից



Ստորագրություն

Արսեն Իսահակյան
(Անուն, ազգանուն)
18.09.2019թ.

Որակավորման վկայականի համարը N_0332 տրման ամիս, ամսաթիվը _ «14» Մայիսի _ 2014թ.
Իրավաբանական անձի N 66970821

<<ՀԱՅԱՆՏԱՌ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<АРМЛЕС>> ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

Յավելված 6

<<ԴՄԵՂԻ

Ф И Л И А Л

ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>>

<<ДСЕХСКИЙ ЛЕСХОЗ>>

ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Директор

Տնօրեն

ՀՀ Լոռու մարզ, գ. Դսեղ, փողոց 6, շենք 24

Հեռ. 055-22-40-46


17.03.2019թ N 32

Հայանտառ ՊՈԱԿ տնօրեն

Պարոն՝ Ա.Կարապետյանին


Հարգելի պարոն Կարապետյան

Ի պատասխան Ձեր 06.03.2019թ թիվ 01-17/04 գրության հայտնում ենք, որ << Դսեղի անտառտնտեսություն>> մասնաճյուղի աշխատակիցները Դսեղի անտառպետության թիվ 1 պահարածին 2-րդ քառակուսում կատարեցին տեղազննում ներկայացված կորդինատներով տարածքներում: Տեղազննման արդյունքում պարզվեց ,որ 150մ շառավիղով կա չորս հատ բոխի տեսակի(2հատ 20սմ և 2հատ 25սմ) ծառեր, որոնք եթե հողային աշխատանքներ չկատարվի չի հատվի ,իսկ 2 բոխի ծառ ծառայելու է որպես հենակետ:

Տնօրենի ժ/պ  Ա.Ավետիսյան

Ձիփլայնի երկայնական կտրվածք

Ջապեղված 7



Ելակետ

Վերջնակետ

ք. Երևան

25.06.2020թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14-6/8629-20, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.2/4198-2020, ՀՀ էկոնոմիկայի 03/4836-2020 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության 16445-2020 և Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության 21040-2020, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/3154-2020, Կադաստրի կոմիտեի ԴՍ/2954-2020 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Դսեղ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից **0.01 հա** խոտհարք (կադաստրային ծածկագիր՝ 06-035-0142-0072) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. Տերտերյան

քարտուղար՝



Մ. Մկրտչյան



ԼՈՒՈՒ ՄԱՐԶ

ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, * 1718, հրապարակ 1,
հեռ. (0253)6-14-39, էլ. փոստ՝ dsegh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» հուլիսի 2020 թվականի N 35

ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՒՆԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՐԶԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱԿՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԿԱՐԶԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԶԱԿԱԼԱԿԱՆ ԿՃԱՐԻ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՃԱՐ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՔԱՅԼԻ ՉՍՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելու «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 31-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենսգրքի 37 հոդվածի 1-ին կետով հիմք ընսունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 25.06.2020թ. թիվ 71 դրական եզրակացությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

- Համայնքային սեփականություն հանդիսացող 06-035-0142-0072 ծածկագրի 0.01 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարքի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հասարակական կառուցապատման:
- Թույլատրել Դսեղ համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող, հատուկ պահպանվող, պատմամշակութային տարածք հանդիսացող, բնապահպանական արժեք ներկայացնող «Ծովեր»-ին հարակից, Լոռու մարզ Դսեղ համայնքի, 4-րդ փ. 97 հասցեի 06-035-0142-0072 ծածկագրի 0.01 հա հասարակական կառուցապատման հողամասը մրցութային կարգով, վարձակալության իրավունքով 10 տարի ժամկետով տրամադրելու, տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանելով 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ:
- Հաստատել 5000 դրամ մրցույթի մասնակցության վճարով, մեկնարկային գնի 5% քայլի չափով և նախավճար մեկնարկային գնի 5% չափով:
- Ուժը կորցրած ճանաչել ավագանու 23.12.2019թ. թիվ 43 որոշումը:

Ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Չեռնպահ (0)
Ն. Դալլաբյան	<i>Wet</i>		
Փ. Խառատյան	<i>[Signature]</i>		
Կ. Ղազարյան	<i>[Signature]</i>		
Դ. Վանյան	<i>[Signature]</i>		
Ա. Քոչարյան	<i>[Signature]</i>		



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

[Signature]

ԳԱՌՆԻԿ ՀՈԿՍԵՓՅԱՆ

**Դսեղ համայնքի "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում
գիփլայնի կառուցման համար նախատեսվող տարածքում և դրա
շրջակայքում բուսական և կենդանական աշխարհի գնահատման
հաշվետվություն**

Բուսական աշխարհ (Կատարող՝ Ի. Գաբրիելյան)

2020 թվականին Լոռու մարզի Դսեղ գյուղի շրջակայքում, Զիպլայնի շահագործման համար նախատեսվող տարածքում կատարվել է բուսաբանական ուսումնասիրություն: Ուսումնասիրվել են անոթավոր բույսերի ֆլորան, բուսականությունը, հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ տեսակների առկայությունը, տեսակների նշանակությունը:

Մեթոդները

Հետազոտությունները կատարվել են դաշտային աշխատանքների հիման վրա, մարշրուտային մեթոդով: Դաշտային աշխատանքների արդյունքում հավաքվել են հերբարիումների մոտ 120 թերթ: Բույսերի որոշման համար կատարվել են նաև ֆոտոլուսանկարներ: Նմուշների մշակումն ու տեսակների որոշումը կատարվել է լաբորատոր պայմաններում:

Տեսակների որոշումների և տեսակների վերաբերյալ լրացուցիչ տվյալների աղբյուր են հանդիսացել Հայաստանի ֆլորայի 11 հատորները (Флора Армении, 1954-2009), ՀՀ Բույսերի Կարմիր գիրքը (2010), ինչպես նաև նախկինում մեր կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները: Բույսերի գիտական անվանումները ճշտվել են ըստ Ս. Չերեպանովի մեթոդական ձեռնարկի (Черепанов, 1995): Տվյալների վերլուծության ժամանակ օգտագործվել են Ա.Ի. Տոլմաչովի (1970) և Լ.Ի. Մալիշևի (1987) կողմից առաջադրված ֆլորայի քանակական վերլուծության մեթոդները:

“Ծովերում” նախատեսվող Զիպլայնի տարածքում դիտարկումները, հերբարիումային հավաքները, ֆոտոլուսանկարները կատարվել են տարածքի ողջ շրջագծով և տարածքի ներսում՝ համապատասխան ծառերի շրջակայքում ու լճակի պարագծով՝ ֆլորայի կազմը լիարժեք բացահայտելու նպատակով:

Համակարգչային Excel ծրագրով ստեղծվել է բուսատեսակների տվյալների բազա, որում ընդգրկվել են բույսերի տեսակային կազմը լատիներեն և հայերեն անուններով, տեսակների «ՀՀ բույսերի Կարմիր գրքում» ընդգրկվածությունը, էնդեմիզմը, կենսաձևերը, գիտական և տնտեսական նշանակությունը:

Հետազոտման արդյունքներ

Ֆլորան

Ըստ ուսումնասիրման արդյունքների, “Ծովերի” շրջակայքում հավաքվել և որոշվել են բույսերի 77 տեսակ, որոնք պատկանում են բարձրակարգ անոթավոր բույսերի 66 ցեղի և 36 ընտանիքի (Հավելված 1): Նշված 77 տեսակներից մեկը պատկանում է Զիաձետանմանների, մնացած 76 տեսակները՝ Ծածկասերմավորների դասերին:

Տեսակների ամենամեծ քանակությունը հայտնաբերվել է Վարդագգիների (13 տեսակ), Հովանոցագգիների, Լոբագգիների (6 տեսակ), Երթնածաղկավորների (6 տեսակ),

Բարդաձաղկավորների (4 տեսակ), Ցախակեռասագգիների (4 տեսակ), Ուռենագգիների (4 տեսակ), Խաչաձաղկավորների (3 տեսակ), Հացագգիների (3 տեսակ) և այլ ընտանիքների կազմում:

Բուսականությունը

Հետազոտված տարածքի մեծ մասը զբաղեցնում է “Ծովեր” կոչվող լիճը (Նկար 2, որը բավականին հարուստ է ջրային և ջրամերձ բուսականությամբ: Լճի ափերի բուսականությունը հիմնականում անտառային է: Բուսաաշխարհագրական առումով այն պատկանում է Իջևանի ֆլորիստիկ շրջանին: Ուսումնասիրվող տարածքի ցամաքային հատվածում բուսականության հիմնական ֆոնը կազմում է Հյուսիսային Հայաստանում տարածված կովկասյան տիպի խառը սաղարթավոր անտառը (Նկար 1, 2):



Նկար 1. Ուսումնասիրվող տարածքը՝ խառը սաղարթավոր անտառ



Նկար 2. Ուսումնասիրվող տարածքը՝ “Ծովեր” լիճը

Տարածքի մեծ մասում, արդեն իսկ կապված մարդկանց մեծ այցելությունների հետ, բուսականությունը մասամբ երկրորդնային է: Այստեղ մեծ զարգացում ունեն աղբաբույսերը

(*Capsella bursa-pastoris* – Ծոսապաշար, *Hyoscyamus niger* - Բանգի սև), մուլախոտերը (*Chenopodium album* - Թելուկ սպիտակ) և այլն (Նկար 3, 4):



Նկար 3. *Hyoscyamus niger* - Բանգի սև



Նկար 4. *Chenopodium album* - Թելուկ սպիտակ

Ջրային և ջրամերձ բուսականության տեսակներից կարելի է նշել Մատիտեղ երկկենցաղը (*Polygonum amphibium* L.), Հովվափող սովորականը (*Alisma plantago-aquatica* L.) Կնյուն բաժանվածը (*Juncus effusus* L.) Մացառեղեգ դուրս լողացողը (*Sparganium emersum* Rehm.), Կեռոն լայնատերևը (*Typha latifolia* L.) և այլն (Նկար 5-7):



Նկար 5. *Polygonum amphibium* - Մատիտեղ
երկկենցաղ



Նկար 6. *Alisma plantago-aquatica* -
Հովվափող սովորական, Ջրի եզան
լեզու



Նկար 7. *Juncus effusus* - Կնյուն բաժանված

Ծառաթփային տեսակներից հիմնական անտառկազմող տեսակը խոշորառեջ կամ արևելյան կաղնին է (*Quercus macranthera* F. et M. ex Hohen.): Ծառաթփային մյուս տեսակներից կարելի է նշել Բոխի սովորականը (*Carpinus betulus* L.), Թխկի դաշտայինը (*Acer campestre* L.), Հաճարենի արևելյանը (*Fagus orientalis* Lipsky), Տանձենի կովկասյանը (*Pyrus caucasica* Fed.), Ուռենի եռառեջը (*Salix triandra* L.), Լորենի սրտաձևը (*Tilia cordata* Mill.), Սալոր փշավորը (*Prunus spinosa* L.), Կտակենի սևը (*Sambucus nigra* L.) և այլն (Նկար 8-10):



Նկար 8. *Quercus macranthera* - Կաղնի արևելյան



Նկար 9. *Carpinus betulus* - Բոխի սովորական



Նկար 10. *Fagus orientalis* - Հաճարենի արևելյան

Հազվագյուտ և էնդեմիկ տեսակները

Նախատեսվող տարածքում իրականացված դաշտային այցելություններով, ինչպես նաև առկա գրականական տվյալների համադրմամբ և նույնականացմամբ հաստատված է, որ ուսումնասիրված տարածքի 77 տեսակների մեջ և մերձակա տարածքներում առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ Բույսերի կարմիր գրքում կամ ԲՊՄՄ (Բնության Պահպանության Միջազգային Միություն) կարմիր ցուցակում գրանցված տեսակները բացակայում են:

Նշված տեսակների մեջ չկան նաև էնդեմիկ և ռելիկտային տեսակներ:

Կենսաձևերը

Հետազոտված տարածքի հիմնական կենսաձևերը բազմամյա (39 տեսակ) խոտաբույսերն են, այնուհետև գալիս են ծառաթփային տեսակները, որոնք կազմում են ուսումնասիրվող տարածքի բուսատեսակների 21.6 տոկոսը (28 տեսակ): Միամյա, միամյա-երկամյա և երկամյա խոտաբույսերը 10-ն են:

Արժեքավոր տեսակները

Որոշված բուսատեսակների մեջ կան մի շարք արժեքավոր տեսակներ՝ դեղատու (մոտ 50 տեսակ), սննդային և համեմունքային (38 տեսակ), մեղրատու (22 տեսակ), կերային (9 տեսակ), տեխնիկական (19 տեսակ), գեղազարդային (18 տեսակ) և այլն (Նկար 11-16) (Հավելված 1):



Նկար 11. *Rumex crispus* - Ավելուկ գանգուր



Նկար 12. *Prunus spinosa* - Սալորի փշավոր



Նկար 13. *Pyrus caucasica* - Տանձենի կովկասյան



Նկար 14. *Fragaria viridis* - Ելակ կանաչ



Նկար 15. *Rosa spinosissima* - Մասրենի առատափուշ



Նկար 16. *Sambucus ebulus* - Կտտկենի խոտային

Եզրակացություններ և առաջարկներ

- “Օռվեր” լճի ափերին “Զիպլայնի” ստեղծման համար նախատեսվող տարածքի բուսաբանական ուսումնասիրությունների և համապատասխան գրականության մշակման արդյունքում պարզ դարձավ, որ ուսումնասիրվող տարածքում հանդիպում են ծածկասերմ բույսերի 77 տեսակ, որոնց կազմում ձիաձետերի դասի 1 և ծածկասերմերի դասի 76 տեսակներ:
- Ուսումնասիրված տարածքի տեսակների մեջ և մերձակա տարածքներում առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ Բույսերի կարմիր գրքում կամ ԲՊՄՄ (Բնության Պահպանության Միջազգային Միություն) կարմիր ցուցակում գրանցված տեսակները բացակայում են:
- Նշված տեսակների մեջ չկան նաև էնդեմիկ և ռելիկտային տեսակներ:
- Առաջարկում ենք “Զիպլայնի” ճոպանների համար նախատեսված ծառերի բները ծածկել պաշտպանիչ նյութով, և յուրաքանչյուր տարի դրանք թարմացնելու հեռանկարով, որպեսզի ծառերը աճման ընթացքում հաստանալով, չենթարկվեն բնի վնասման:
- Առաջարկում ենք No 1 և 2 ծառերի շրջակայքում գտնվող մամխի, մոշենիների և մարբենիների թփուտները ցանկապատել, քանի, որ դրանք այլ բույսերի, ինչպես նաև կենդանիների համար հանդիսանում են կենսաբազմազանության պահպանման կղզյակներ (Նկար 17):



Նկար 17. Մամիսենու բուսուտներից կազմված թփուտը

Օգտագործված գրականություն

Ծատուրյան Թ.Գ., Գևորգյան Մ.Լ. Հայաստանի ուտելի վայրի բույսերը // Երևան, “Լուսակն”, 2007. 300 էջ:

Հայաստանի բույսերի Կարմիր գիրք – 2010:

Малышев Л.И. Современные подходы к количественному анализу и сравнению флор. В кн.: Теоретические и методические проблемы сравнительной флористики. Ленинград, Наука, 1987, с. 142-148.

Толмачев А.И. О некоторых количественных соотношениях во флорах земного шара. Вестн. ЛГУ, № 15, 1970, с. 62-74.

Флора Армении. Отв. ред. Тахтаджян А.Л., Т. 1-11. Ереван, Ругел-Лихтенштейн, 1954-2009.

Черепанов С. К. Сосудистые растения России и сопредельных государств (в пределах бывшего СССР). С.-Петербург, 1995.

Կենդանական աշխարհ

Միջատներ (Կատարող՝ Գ. Կարազյան)

"Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքում անողնաշարավոր կենդանիների ֆաունան երբեք հատուկ ուսումնասիրության ենթակա չի եղել:

ՀՀ Կարմիր գրքում անմիջապես "Դսեղի ծովեր" տարածքից անողնաշար կենդանիներից, այդ թվում՝ միջատների (Insecta) դասին պատկանող գրանցված տեսակ չկա: Սակայն, Վ. Անանյանի (Ananian, Tailly, 2013) հետազոտումնասիրությունների արդյունքում այս տարածքից հայտնաբերվել է ՀՀ Կարմիր գրքում գրանցված ճպուռ (Odonata)՝ *Aeshna cyanea* (Müller, 1764), որը համարվում է Հայաստանի Հանրապետությունում հանդիպող ծայրահեղ հազվագյուտ տեսակ և Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով (IUCN criteria) գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2a (տե՛ս Նկար 1):



Նկար 18. *Aeshna cyanea* (լուսանկար՝ Վ. Անանյան)

Հետազոտությունների մեթոդները

Որպես հետազոտվող ներկայացուցչական (ռեպրեզենտատիվ) խումբ ընտրվել է միջատների (Insecta) դասի առավել բազմազան և բազմաքանակ բզեզների (Coleoptera) կարգը: Այս կարգի ներկայացուցիչները առաջատար դիրք են զբաղեցնում բոլոր ցամաքային և քաղցրահամ ջրերի էկոհամակարգերում, ունեն գանազան էկոլոգիական կապեր և դրանով իսկ բավականաչափ նպատակահարմար են կենսաբազմազանության ամբողջական վիճակի գնահատման համար:

Հաշվետու ժամանակահատվածում դեպի հետազոտության վայր կատարվել է մեկ գիտարշավ՝ 2020 թ. հունիսի 26-ին:

Դաշտային աշխատանքների ընթացքում կիրառվել են միջատաբանական հետազոտությունների ավանդական մեթոդները (Голуб и др., 2012), այդ թվում՝ հավաք միջատաբանական ցանցով, հնձում խոտերի և թփերի վրայով, ճյուղերի թոթափում, ձեռքի հավաք՝ հատուկ ուշադրություն դարձնելով ծեր և մեռած ծառերի բների վրա, և այլն: Նյութը հավաքվել է նախատեսվող կառուցման նշված տարածքում, նախատեսվող կառուցման անմիջապես կետերում, լճակամերձ ճանապարհների երկայնքով, լճակի ափերի ամբողջ պարագծով, շրջակա անտառի նախատեսվող կառուցման ու ենթադրվող ակտիվ գոտու շրջանում և բացատներում:

Նյութը որոշվել է օգտագործելով Հայաստանի բզեզների ֆաունայի որոշ ընտանիքների առկա որոշիչները (Тер-Минасян, 1947; Плавильщиков, 1949; Яблоков-Хнзорян, 1967, 1976, 1983; Марджанян, 1986; Карапетян, 1985), ինչպես նաև՝ ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի ԳԿ-ի Կենդանաբանության ինստիտուտի անողնաշար կենդանիների գիտական կոլեկցիոն նյութերի հետ համեմատության միջոցով:

Ընդգրկվել են նաև հետազոտվող տարածքից մեր կողմից նախկինում հավաքագրված և Կենդանաբանության ինստիտուտի (ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն) հավաքածուների տվյալները: Բոլոր տվյալները ընդհանրացված են Հավելված 2-ում:

Հետազոտությունների արդյունքները

Ուսումնասիրված տարածքից հայտնաբերվել է ընդհանուր առմամբ 32 ընտանիքներին պատկանող 130 տեսակի բզեզներ (Coleoptera) (տե՛ս Աղյուսակ 1): Հետազոտվող տարածքից հայտնաբերված որոշ բզեզների լուսանկարները ներկայացված են (Նկարներ 2-7):

Գրանցվել են նաև որոշ բնապահպանական նշանակություն ունեցող նեղ տարածված տեսակներ, այդ թվում Անդրկովկասի (ET)՝ 3 և Կովկասյան էկոտարածաշրջանի (EC)՝ 5 տեսակի էնդեմիկներ:

Հետազոտվող տարածքից հայտնաբերված որոշ բզեզներ



Նկ. 19. *Chlorophorus figuratus*



Նկ. 20. *Echinocerus floralis*



Նկ. 21. *Pseudovadonia livida bicarinata*



Նկ. 22. *Chrysolina herbacea*



Նկ. 23. *Oedemera podagrariae*



Նկ. 24. *Cionus hortulanus*

Եզրակացություններ

Ընդհանրացնելով վերը շարադրվածը, կարելի է եզրակացնել, որ Դսեղ համայնքի "Դսեղի ծովեր" բնության հուշարձանի տարածքի ուսումնասիրված բզեզների ֆաունան բնութագրվում է բազմազանության բարձր մակարդակով, չնայած տարածքի զբաղեցրած համեմատաբար փոքր մակերեսի:

Ուսումնասիրված տարածքի բզեզների ֆաունան կարող է բնութագրվել որպես հիմնականում անտառային, ընդգրկելով նաև որոշ տափաստանային, մարգագետնային և գերխոնավ բիոտոպերի տարրեր:

"Դսեղի ծովեր" տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված միջատներից առայժմ հայտնի է միջատների միայն մեկ տեսակ, կապույտ շերեփագի ճպուռը (*Odonata*)՝ *Aeshna cyanea* (Müller, 1764) (Ananian, Tailly, 2013), որի վտանգման հիմնական գործոններ են հանդիսանում հիդրոլոգիական ռեժիմի փոփոխությունը և ջրամբարի աղտոտումը: Տեսակի պահպանության միջոցառումներ տարածքում չեն իրականացվում:

Առաջարկություններ

Խիստ անհրաժեշտ է մաքսիմալ չափով պահպանել դեռևս չոչնչացված և քիչ խախտված էկոհամակարգերի ամբողջականությունը: Մասնավորապես անհրաժեշտ է կանխել տարածքի աղտոտումը, հնարավորինս մեծ չափով պահպանել ջրային էկոհամակարգը, անտառային ծածկույթը, բացառելով որևէ ծառահատումներ:

Հարկ է նշել, որ տարածքը արդեն իսկ ենթարկվում է որոշակի մարդածին ճնշմանը, մասնավորապես՝ աղտոտմանը և անասունների գերարածեցմանը:

Նախատեսվող Զիփիլայնի կառուցման աշխատանքները անմիջականորեն չեն ազդելու տարածքի կենսաբազմազանության վրա, սակայն կարելի է ենթադրել, որ նրա շահագործման ընթացքում կավելանա ռեկրեացիոն ճնշումը տարածքի վրա: Ուստի, խիստ անհրաժեշտ ենք համարում իրականացնել անողնաշար կենդանիների կենսաբազմազանության հետագա վիճակի մոնիթորինգ՝ այդ թվում հետազոտությունների քանակական եղանակների կիրառմամբ:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրք. 2010. Երևան, ՀՀ Բնապահպանության նախարարություն, “Չանգակ” հրատ., 368 էջ
2. Ananian V.Yu., Tailly M. 2013. Additions to the dragonfly (Odonata) fauna of Armenia, with new records of rare or uncommon species // Russian Entomological Journal, 22 (4): 249-254.
3. Голуб В.Б., Цуриков М.Н., Прокин А.А. 2012. Коллекции насекомых: сбор, обработка и хранение материала // М., КМК, 340 с.
4. Карапетян А. К. 1985. Зерновки (Bruchidae). Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 172 с.
5. Марджанян М. А. 1986. Щелкуны (Elateridae) Армянской ССР. - Ер., 272 с.
6. Плавильщиков Н. Н. 1949. Определитель жуков-дровосеков Армении. – Ер., 232 с.
7. Тер-Минасян М. Е. 1947. Определитель жуков-долгоносиков (Coleoptera, Curculionidae) Армении. – Зоол. сб. АН АрмССР, 4, 220 с.
8. Яблоков-Хнзорян С. М. 1967. Пластинчатоусые (Scarabaeoidea). Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 225 с.
9. Яблоков-Хнзорян С. М. 1976. Жужелицы (Carabidae), ч.1. Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 292 с.
10. Яблоков-Хнзорян С. М. 1983. Майки (Meloidae) и Пыльцееды (Alleculidae). Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 156 с.

Կենդանական աշխարհ

Ձկներ և երկկենցաղներ (Կատարող՝ Ս. Պիպոյան)

“Դսեղի ծովեր” լճում մինչև 20-րդ դարի 70-ական թվականները որևէ ձկնատեսակ չի բնակվել: Հետագա տարիներին լճում հայտնվել են՝

1. Արծաթափայլ կարասը *Carassius gibelio* (Bloch, 1782)

2. Կարպը /ընտելացված ծածան *Cyprinus carpio* Linnaeus, 1758

Վերոնշյալ ձկնատեսակներից արծաթափայլ կարասը վերջին երկու տասնամյակի ընթացքում մշտապես հանդիպում է լճում, որտեղ գտել է հարմար պայմաններ իր բնականոն կենսագործունեության համար:

Արտաքին տեսքը. Մարմինը բարձր է, մի փոքր սեղմված կողքերից: Թեփուկները խոշոր են, կողագծում 27-33: Կլանային ատամները միաշարք են: Պոչի լողակը համեմատաբար խոր կտրվածքով է: Մեջքի լողակը երկար է՝ 3-4 չճյուղավորված և 15-20 ճյուղավորված ճառագայթով, հետանցքի լողակը՝ կարճ՝ համապատասխանաբար 3 և 5, երբեմն 4 կամ 6 ճառագայթով: Մեջքի և հետանցքի լողակների վերջին չճյուղավորված ճառագայթները հաստացած են և կրում են կեռ փոքրիկ ատամիկներ: Խոիկային առեջները թվով 39-58 են: Մարմնի գունավորումը կախված է միջավայրի պայմաններից: Մեջքը և գլխի վերին մասը մուգ է, կողերը՝ արծաթափայլ՝ երկնագույն մետաղական փայլով կամ գորշադեղնավուն՝ ոսկեգույն նրբերանգով: Փորիկը սպիտակավուն է: Մեջքի և պոչի լողակներն իրենց հերթին կարող են լինել մոխրագույն, մուգ մոխրագույն, գորշ, համարյա սև, մյուս լողակները՝ մոխրագույն կամ բաց մոխրագույն, փորին և հետանցքի լողակները՝ հաճախ նաև դեղնավուն, բաց նարնջագույն կամ անգույն: Աչքի ծիածանաթաղանթը դեղնավուն է կամ արծաթագույն (Նկար 25):



Նկար 25. “Դսեղի ծովեր: լճում նմակվող արծաթափայլ կարասի արտաքին տեսքը

Միջին չափի ձուկ է: Հայաստանի ջրամբարներում մարմնի երկարությունը սովորաբար 15-18 սմ է, սակայն կարող է հասնել մինչև 35-40 սմ, իսկ քաշը՝ 2 կիլոգրամից ավել: “Դսեղի ծովեր” լճակում հասնում է մինչև 20 սմ երկարության, սովորաբար 10-12 սմ, ինչը վկայում է լճում կարասի աճի ու կերային բազայի համեմատաբար վատ պայմանների մասին: վերջինիս մասին է խոսում նաև այն փաստը, որ լճում արծաթափայլ կարասը ունի համեմատաբար խոշոր գլուխ և նեղ մարմին:

Կենսակերպը: Բնակվում է վտառներով: Սովորաբար հանդիպում է հանդարտ հոսք և հարուստ բուսականություն ունեցող ջրերում: Դիմացկուն է միջավայրի անբարենպաստ պայմանների նկատմամբ: Կարող է իր համար անվնաս դիմագրավել ջերմաստիճանի կտրուկ փոփոխություններին, թթվածնային քաղցին: Նախընտրում է բնակվել ջրամբարների մերձհատակային շրջանում կամ ջրի միջին շերտերում: Ջրակալում թթվածնային անբարենպաստ պայմանների դեպքում բավական շատ ժամանակ անցկացնում է ջրի մակերևույթին (Նկար 26):



Նկար 26. Արծաթափայլ կարասի վտառը “Դսեղի ծովեր” լճի մակերեսին

Ամենակեր է և հեշտորեն փոփոխում է իր համար սնունդ հանդիսացող օրգանիզմները. սնվում են դետրիտով, կակղամորթներով, ստորակարգ

խեցգետնակերպերով, բույսերով: Սննդային ակտիվությունը սովորաբար բարձր է առավոտյան և երեկոյան ժամերին:

Մեռահասունության են հասնում կյանքի առաջին կամ երկրորդ տարվա ընթացքում, Սևանա լճում՝ երկրորդ կամ երրորդ տարվա ընթացքում, երբեմն ավելի ուշ: Բազմացումը ընդմիջումներով կատարվում է ապրիլ-հունիս ամիսներին՝ ջրի 14-180C դեպքում: Բազմացման ընթացում արունների գլխի և կրծքային լողակների վրա հաճախ հայտվում է լավ արտահայտված էպիթելային “մարգարտյա” ցան:

Հասունացած ձկնկիթը դեղնավուն է, 1-1.3 մմ տրամագծով: Այն կաշուն է և դրվում է ստորջրյա բույսերի վրա: Բեղունությունը միջինում կազմում է 76000 ձկնկիթ, սակայն կարող է հասնել մինչև 500000-ի: Ձկնկիթի զարգացումը տևում է 3-5 օր, թրթուրներինը՝ մինչև մեկ ամիս:

Տարածվածությունը: Հայրենիքն Արևելյան Ասիան է, սակայն լայնորեն տարածված է նաև Եվրոպայում, կլիմայավարժվել է նաև ողջ Արևմտյան Ասիայում: Հայաստանի ձկնային տնտեսություններ է ներմուծվել պատահականորեն՝ XX դարի 70-ական թվականներին և ընկնելով բնական ջրամբարներ՝ ներկայումս լայնորեն տարածվել ու հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր գետերում, լճերում, արհեստական ջրամբարներում, բացի բարձրլեռնային որոշ լճերից: Սկսած անցած դարի 90-ական թվականներից հանդիպում է նաև “Դսեղի ծովեր” լճում: Ինվազիվ տեսակ է: Ամենայն հավանականությամբ, այս ձկնատեսակը ներմուծել են լիճ սիրող ձկնորսները, կամ էլ նա այստեղ է ընկել պատահաբար՝ ջրլող թռչունների օգնությամբ /<https://www.pnas.org/content/early/2020/06/17/2004805117/>:

Տնտեսական նշանակությունը: Միրողական ձկնորսության օբյեկտն է հանդիսանում Հայաստանում:

Նախատեսվող գործունեության ազդեցությունը: Զիպլայնի կառուցումն ու հետագա շահագործումը որևէ անմիջական ազդեցություն չի կարող ունենալ արծաթափայլ կարասի վրա:

Կարպ/ Ծածան *Cyprinus carpio* Linnaeus, 1758

Այս ձկնատեսակը “Դսեղի ծովեր” լճակում մշտապես չի հանդիպում և նրա պարբերական հայտնվելը լճում ամենայն հավանականությամբ պայմանավորված է սիրող ձկնորսների կողմից այստեղ մանրաձկների բաց թողնման հետ:

Արտաքին տեսքը. Մարմինը երկարավուն է, մի փոքր սեղմված կողքերից: Բերանը գտնվում է դնչի ծայրին: Վերին շրթունքի վրա կա 2 զույգ կարճ բեղիկ:

Թեփուկները խոշոր են, կողագծում 36-40: Կլանային ատամները եռաշարք են: Պոչի լողակը համեմատաբար խոր կտրվածքով է: Մեջքի լողակը երկար է՝ 4 չճյուղավորված և 17-23 ճյուղավորված ճառագայթով, իսկ հետանցքի լողակը կարճ՝ 2-3 չճյուղավորված և 5-6 ճյուղավորված ճառագայթով: Մեջքի և հետանցքի լողակների վերջին չճյուղավորված ճառագայթները հաստացած են և կրում են կեռացած ու երկշարք փոքրիկ ատամիկներ: Խոռիկային առեջները թվով 22-27 են: Մեջքը և գլխի վերին մասը կարող են լինել մուգ մոխրագույն, գորշ, մոխրականաչավուն: Կողերը՝ դեղնաոսկեգույն են, փորիկը՝ սպիտակավուն կամ դեղնավուն: Մեջքի և պոչի լողակները կարող են լինել մոխրագույն, մուգ մոխրագույն, գորշ, համարյա սև: Պոչի լողակի ստորին բիլթը հաճախ կարմրա կամ նարնջամոխրագույն է: Կրծքի լողակները հաճախ մոխրագույն են, փորի լողակները՝ նաև դեղնամոխրագույն, նարնջամոխրագույն: Հետանցքի լողակը հաճախ դեղնավուն է կամ նարնջագույն: Աչքի ծիածանաթաղանթը ոսկեգույն է, վերին մասում՝ մոխրագույն (Նկար 27):



Նկար 27. Կարպ մանրաձկան արտաքին տեսքը

Խոշոր ձուկ է: Հայաստանի ջրակալներում մարմնի երկարությունը սովորաբար 35-50 սմ է, սակայն որոշ առանձնյակներ կարող է հասնել մինչև 75 սմ երկարության,

իսկ քաշը՝ 8 կիլոգրամից ավել: Ընդհանուր առմամբ, կարող է հասնել մինչև 40 կգ քաշի և ապրել 38 տարի:



Նկար 28. Կարպը և արծաթափայլ կարասները /ցանցում/

Կենսակերպը: Սովորաբար հանդիպում է հանդարտ հոսք և հարուստ բուսականություն ունեցող ջրերում: Նախընտրում է բնակվել ջրամբարների մերձհատակային շրջանում: Ամենակեր է: Որպես հիմնական սնունդ են ծառայում հատակային մանր անողնաշարավորները՝ միջատների թրթուրները, ստորակարգ խեցգետնակերպերը, կակղամորթները, որդերը, ինչպես նաև բույսերը, դետրիտը: Մանրային ակտիվությունը սովորաբար բարձր է առավոտյան և երեկոյան ժամերին:

Մեռահասունության են հասնում կյանքի 3-5 տարվա ընթացքում՝ մարմնի 35 սմ նվազագույն երկարության դեպքում: Բազմացումը հարթավայրային շրջաններում ընդհատումներով կատարվում է ապրիլ-մայիս ամիսներին, բարձրադիր գոտիներում՝ հունիսին՝ ջրի 15-16°C ջերմաստիճանային պայմաններում: Բազմացման համար կարևոր նախապայման է ձվադրավայրերում ջրերի վարարումը և մակարդակի սովորականից ավել բարձրացումը, ինչպես նաև առափնյա բուսականության առկայությունը: Բազմացման ժամանակահատվածում արուների մարմնի վրա հայտվում է էպիթելային «մարգարտյա» ցան:

Հասունացած ձկնկիրթը դեղնավուն է, 1.3-1.4 մմ տրամագծով: Այն կայուն է և դրվում է ափամերձ ստորջրյա բույսերի վրա, ջրի մակերեսին մոտ: Բեղունությունը կարող է հասնել մինչև 650000 ձկնկիրթի: Ձկնկիրթի զարգացումը, կախված ջրի ջերմաստիճանից, տևում է 4-8 օր, թրթուրներինը՝ մինչև մեկ ամիս:

Տարածվածությունը: Լայնորեն տարածված է Եվրոպայի և Ասիայի գետերում ու լճերում: Հայաստանում հանդիպում է Արաքս, Ախուրյան, Մեծամոր, Հրազդան, Արփա, Քասաղ գետերում, Արփի լճում, Արարատյան հարթավայրի ջրանցքներում, արհեստական լճակներում, Ախուրյանի ջրամբարում: Եզակի առանձյակներ որսվել են նաև Սևանա լճում: Ներկայումս Հայաստանի ձկնային տնտեսություններից բնական ջրակալներ են ներթափանցել ծածանի ընտելացված ու ավելի բարձրամարմին ձկերը՝ թեփուկավոր և հայելային կարպերը:

Տնտեսական նշանակությունը: Արժեքավոր ձկնատեսակ է և սիրողական ձկնորսության օբյեկտ:

Նախատեսվող գործունեության ազդեցությունը: Զիպլայնի գործունեությունը որևէ ազդեցություն չի կարող ունենալ կարպի վրա, քանի որ վերջինս լճում հանդիպում է դեպքից դեպք՝ արհեստական ներմուծումների արդյունքում:


Առաջարկություն: Զիպլայնի գործունեության արդյունավետության վրա դրական ազդեցություն կարող է ունենալ լճում կարպի մանրաձկների ներմուծումը և այստեղ սիրողական ձկնորսության կազմակերպումը:

“ԴՍԵՂԻ ԾՈՎԵՐ” ԼՃԱԿԻ ԱՌԱՓՆՅԱ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐԸ

1990-2000-ականների ընթացքում կատարված դիտարկումների արդյունքում “Դսեղի ծովեր” լճում հայտնաբերվել են հետևյալ երկկենցաղները՝

1. Լճագորտ *Pelophylax ridibundus*
2. Փոքրասիական գորտ *Rana macrocnemis*
3. Արևելյան ծառագորտ *Hyla orientalis*
4. Կանաչ փոփոխական դողոշ *Bufo variabilis*

Վերոգրյալ երկկենցաղներից լճում առավել բազմաքանակը լճագորտն է (Նկար 28), որը մշտապես բնակվում է լճի ափերին և չի հեռանում այդտեղից տարվա բոլոր եղանակներին: Այս տեսակի կենսակերպն ամբողջովին շաղկապված է լճի հետ:



Նկար 28. Լճագորտ

Փոքրասիական գորտը լճում հիմնականում հանդիպում է վաղ գարնանը, երբ սկսվում է նրա բազմացման շրջանը: Մնացած ամիսներին հանդիպում է լճի ափերից հեռու:



Նկար 29. Փոքրասիական գորտ

Արևելյան ծառագորտը նույնպես հանդիպում է գարնան ընթացքում լճի ափերին աճող եղեգնուտների մեջ: Այս ընթացքում ծառագորտը բազմանում է այստեղ:



Նկար 3. Արևելյան ծառագորտ

Փոփոխական դողոշը գարնանը մոտենում է լճի ափերին՝ բազմանալու համար: Մնացած բոլոր ամիսներին վարում է թափառական կյանք և պարբերաբար հայտնվում է լճի ափերին տարվա բոլոր եղանակներին, բացի ձմռանից:



Նկար 31. Փոփոխական դողոշ

Նախատեսվող գործունեության ազդեցությունը երկկենցաղների վրա և առաջարկություններ դրանց ազդեցությունը մեղմելու համար: Զիպլայնի կառուցման, ինչպես նաև շահագործման ընթացքում հնարավոր է, որ շինարարական աշխատանքները և զբոսաշրջիկների այցելությունները, աղմուկը, կենցաղային թափոնները, կենդանիներին անհանգստացնելու այլ գործոնները բացասաբար ազդեն վերոնշյալ երկկենցաղների կենսագործունեության վրա, հատկապես բազմացման շրջանում:

Այդ գործոնների չեզոքացման համար նպատակով առավել նպատակահարմար է կառուցման աշխատանքներն իրականացնել աշնան ամիսների ընթացքում, իսկ շահագործման ընթացքում՝

1. Լճի եղեգնապատ ու դրանց հարակից տարածքներում արգելել զբոսաշրջիկների և հանգստացողների ազատ տեղաշարժը, շինարակական աշխատանքները,

2. Իրականացնել միջոցառումներ երկկենցաղների ու դրանց շերտփուկների որսն ու ոչնչացումը արգելելու համար,

3. Բացատրական աշխատանքներ տանել զբոսաշրջիկների և տեղացի բնակչության շրջանում երկկենցաղների դրական նշանակության և պահպանության անհրաժեշտության մասին:

4. Լճի ողջ առափնյա շրջանը մաքուր պահել կենցաղային թափոններից, խոտածածկի անհարկի տրոբումից:

Վերոնշյալ ձևերից և երկկենցաղներից որևէ մեկն ընդգրկված չէ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: Սակայն, ի տարբերություն ձկների, լճի ափերին բնակվող երկկենցաղները, հատկապես արևելյան ծառագորտը խոցելի տեսակներ են և պետք է հետևել, որ լճի ափերին և ծանծաղուտներում գտնվող եղեգնուտները պահպանվեն, որոնք կարող են ապաստարան հանդիսանալ ինչպես այդ տեսակի, այնպես էլ մյուս երկկենցաղների համար, ինչպես նաև կարող են ծառայել նաև որպես ձվադրավայրեր լճում բնակվող ձկնատեսակների համար:

Կենդանական աշխարհ

Ցամաքային ողնաշարավորներ (Կատարող՝ Տ. Հայրապետյան)

Նյութը և մեթոդները

Կենդանիների ուսումնասիրության ժամանակ օգտագործվել են ընդունված մեթոդներ, այդ թվում առավոտյան և երեկոյան ժամերին տաքացող սողունների հաշվառում երթուղիների երկայնքով, թաքստոցների ստուգում: Ցերեկային ակտիվություն ունեցող կենդանիները դիտարկվել են երթուղային մեթոդով, թաքնված կենսակերպ վարող տեսակներին հայտնաբերելու համար ստուգվել են բոլոր համապատասխան թաքստոցները: Կրծողների ուսումնասիրության նպատակով ստուգվել է դրանց տեղաշարժման արահետների և բների առկայությունը, ինչպես նաև քարերի տակ ժամանակավոր կացարանները: Թռչունների և ձեռքաթևավորների ուսումնասիրության նպատակով օգտագործվել են նաև ձայների և ուլտրաձայների միջոցով տեսակորոշման մեթոդներ:

Ուսումնասիրվել է նաև էլակետի, որի տարածքը կազմում է 0,0441հա, և վերջնակետի, որի մակերեսը կազմում է 0,01հա, տարածքները, դրանցում առկա բների, թաքստոցների հայտնաբերման նպատակով:

Կատարվել է նաև գրականության ուսումնասիրություն և վերլուծություն:

Հետազոտված տարածքը ունի մեծ կենսաբազմազանություն: Ընդհանուր առմամբ հետազոտվող տարածքում և դրա շրջակայքում դիտարկվել են 91 (իննսունմեկ) տեսակ ցամաքային ողնաշարավորներ, որոնցից 6 (վեց) տեսակներ գրանցված են ՀՀ կարմիր գրքում: Այդ տեսակներն են՝

1. *Darevskia dahli* - Դալի ժայռային մողես
2. *Neomys teres* - Շելկովնիկովի ջրային սրնչակ
3. *Felis silvestris* - Եվրոպական անտառակատու
4. *Miniopterus schreibersi (pallidus)* - Սովորական երկարաթև
5. *Plecotus auritus* - Գորշ ականջեղ
6. *Ursus arctos* - Գորշ արջ:

Շելկովնիկովի ջրային սրնչակի, սովորական երկարաթևի և գորշ ականջեղի կենսակերպում կարևոր է ջրային տարածքների առկայությունը, քանի որ առաջին տեսակը բնադրում և սնվում է անմիջապես ջրավազանների կամ գետերի ապերին, իսկ մյուս 2 տեսակները սնվում են ջրային ավազանի մակերևութամերձ տարածքներում թռչող միջատներով:

Ցամաքային ողնաշարավորների դիտարկված տեսակների ամբողջական ցուցակները ներկայացված են սույն հաշվետվության հավելված 3-ում, հավելված 4-ում և հավելված 5-ում:

Եզրակացություն

Հետազոտելի «Դսեղի ծովեր» տարածքում զիփլայնի կառուցման անմիջական ազդեցության հատվածներում՝ 0,0441հա ելակետ և 0,01հա վերջնակետ, ցամաքային ողնաշարավորների բներ և ժամանակավոր կացարաններ չեն հայտնաբերվել: Այդ տարածքներում ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն դիտարկվել:

Առաջարկություններ

Նկատի ունենալով, որ ՀՀ կարմիր գրքում գրանցված և այս տարածքում հանդիպող տեսակներից 3 տեսակի համար կարևոր է ջրավազանի առկայությունը, առաջարկում են առանձնահատուկ ուշադրություն դարձնել ափամերձ տարածքների մաքրության պահպանության հարցերին: Անհրաժեշտ է հետևել, որպեսզի բնական քարակույտերը չխախտվեն, քանի որ քարերի տեղաշարժի կամ տեղափոխման ժամանակ վնասվում են դրանց տակ կառուցվող ժամանակավոր և մշտական կացարանները, որը բացասաբար է անդրադառնում կենդանիների վրա:









Plantae - ԲՈՒՅՍԵՐ

HIGER PLANTS

EQUISETOPHYTA - ՁԻԱՁԵՏԵՐ

Equisetaceae - Ձիաձեռագգիներ

Equisetum arvense L.- Ձիաձեռ դաշտային

ANGIOSPERMAE - ԾԱԾԿԱՍԵՐՄԵՐ

Aceraceae - Թխկազգիներ

Acer campestre L. - Թխկի դաշտային

Alismataceae - Հովվափողագգիներ

Alisma plantago-aquatica L. - Հովվափող սովորական, Ջրի եզան լեզու

Apiaceae - Հովանոցագգիներ

Astrantia trifida Hoffm. - Աստղաբույս եռաբաժան

Chaerophyllum aureum L. - Շուշանբանջար ոսկեգոծ

Asteraceae - Բարդաձողկավորներ

Arctium lappa L. - Կոծոծ, Կռատուկ երեսնակ

Cichorium intybus L. - Եղերդակ, Ճարճատուկ սովորական

Taraxacum officinale Wigg. - Խատուտիկ դեղատու

Tussilago farfara L. - Տատրակ սովորական, Խոճկորիկ

Betulaceae - Կեչագգիներ

Carpinus betulus L.-Բոխի սովորական

Boraginaceae - Գաղտրիկագգիներ

Symphytum asperum Lepech. - Բարխոտ կոշտ

Brassicaceae - Խաչաձողկավորներ

Capsella bursa-pastoris (L.) Medik. - Ծոսապաշար, Հովվամաղախ

Dentaria bulbifera L. - Ատամնախոտ պալարակիր

Hesperis matronalis L. - Գիշերային մանուշակ

Caprifoliaceae - Ցախակեռասագգիներ

Lonicera caprifolium L. - Ցախակեռաս բուրավետ

Lonicera orientalis Lam. (ERE= *Lonicera caucasica* Pall.) - Ցախակեռաս արևելյան

Sambucus ebulus L. - Կոտկենի խոտային

Sambucus nigra L. - Կոտկենի սև

Chenopodiaceae - Թելուկագգիներ

Chenopodium album L. - Թելուկ սպիտակ /կամ սովորական/

Convolvulaceae - Պատատուկագգիներ

Convolvulus arvensis L. - Պատատուկ դաշտային

Cornaceae - Հոնագգիներ

Swida australis (C.A. Mey.) Pojark. ex Grossh. - Ճապկի հարավի

Dipsacaceae - Ակքանագգիներ

Dipsacus laciniatus L. - Ակքան կտրտված

Euphorbiaceae - Իշակաթնուկազգիներ

Euphorbia boissieriana (Woronow) Prokh. - Իշակաթնուկ Բուսափեյի

Fabaceae - Լոբազգիներ

Lotus caucasicus Kuprian. ex Juz. - Եղջերառվույտ կովկասյան

Medicago lupulina L. - Առվույտ գայլուկանման

Melilotus officinalis (L.) Pall. - Իշառվույտ դեղատու

Trifolium pratense L. - Երեքնուկ մարգագետնային

Trifolium repens L. - Երեքնուկ սողացող

Fagaceae - Հաճարազգիներ

Fagus orientalis Lipsky - Հաճարենի արևելյան

Quercus macranthera F. et M. ex Hohen. - Կաղնի արևելյան

Hyacinthaceae - Հակինթազգիներ

Scilla armena Grossh. - Մկնաստիս հայկական

Hydrangeaceae - Դրախտավարդազգիներ

Hypericum perforatum L. - Սրոհունդ խոցված

Juglandaceae - Ընկուզազգիներ

Juglans regia L. - Ընկուզենի սովորական

Juncaceae - Կնյունազգիներ

Juncus effusus L. - Կնյուն բաժանված

Lamiaceae - Ծրթնածաղկավորներ

Lamium album L. - Խուլ եղինջ սպիտակ

Lycopus europaeus L. - Ճահճատեղինջ եվրոպական

Mentha longifolia (L.) Huds. - Անանուխ, Դաղձ երկարատերև

Origanum vulgare L. - Խնկածաղիկ սովորական

Prunella vulgaris L. - Սևազլիսիկ սովորական

Thymus kotschyanus Boiss. et Hohen. - Ուրց Կոչիի

Oleaceae - Ձիթենազգիներ

Fraxinus excelsior L. - Հացենի սովորական

Plantaginaceae - Չղախոտազգիներ

Plantago lanceolata L. - Չղախոտ, Եզան լեզու նշտարատերև

Plantago major L. - Չղախոտ, Եզան լեզու մեծ

Poaceae - Հացազգիներ

Dactylis glomerata L. - Ոգնախոտ հավաքված

Hordeum murinum L. - Գարի մկնային, Մկնագարի

Poa bulbosa L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավուկ սոխուկավոր

Polygonaceae - Մատիտեղազգիներ

Polygonum amphibium L. - Մատիտեղ երկկենցաղ

Rumex crispus L. - Ավելուկ գանգուր

Primulaceae - Գնարբուկազգիներ

Primula macrocalyx Bunge - Գնարբուկ խոշորաբաժակ

Ranunculaceae - Գորտնուկազգիներ

Ranunculus sceleratus L. - Գորտնուկ թունավոր

Thalictrum minus L. - Քնձմնձուկ փոքր

Rhamnaceae - Դժնիկազգիներ

Rhamnus cathartica L. - Դժնիկ լուծողական

Rosaceae - Վարդազգիներ

Agrimonia eupatoria L. - Երեսնակ սովորական

Cerasus avium (L.) Moench - Կեռասենի անտառային

Fragaria viridis (Duch.) Weston - Ելակ կանաչ

Geum urbanum L. - Շահոքրամ սովորական

Malus orientalis Uglitzk. - Խնձորենի արևելյան

Prunus divaricata Ldb. - Սալոր, Շոր

Prunus spinosa L. - Սալոր փշավոր

Pyrus caucasica Fed. - Տանձենի կովկասյան

Rosa canina L. - Մաարենի շան

Rosa iberica Stev. ex Bieb. - Մաարենի վրացական

Rosa spinosissima L. - Մաարենի առատափուշ

Rubus armeniacus Focke. - Մոշենի հայկական

Spiraea hypericifolia L. - Ասպիրակ արևքուրիկատերև

Rubiaceae - Տորոնազգիներ

Galium aparine L. - Մակարդախոտ կաչուն

Salicaceae - Ուռենազգիներ

Salix alba L. - Ուռենի սպիտակ

Salix caprea L. - Այծուռենի, Ործուռի

Salix excelsa S. G. Gmel. - Ուռենի բարձր

Salix triandra L. - Ուռենի եռատեղ

Saxifragaceae - Քարբեկազգիներ

Rhynchosorys orientalis (L.) Benth. - Կտուցախոտ արևելյան

Solanaceae - Մորմազգիներ

Hyoscyamus niger L. - Բանգի սև

Sparganiaceae - Մացառեղեգազգիներ

Sparganium emersum Rehm. - Մացառեղեգ դուրս լողացող

Tiliaceae - Լորենազգիներ

Tilia begoniifolia Stev. - Լորենի բեզոնիատերև

Tilia cordata Mill. - Լորենի սրտաձև

Typhaceae - Կեռոնազգիներ

Typha latifolia L. - Որձախոտ, Կեռոն լայնատերև

Urticaceae - Եղինջազգիներ

Urtica dioica L. - Եղինջ երկտուն

Հավելված 2

No	Կարգաբանական խմբեր	Կարգավիճակ *
1. Ընտանիք Carabidae		
1.	<i>Carabus septemcarinatus</i> Motsch	ET
2.	<i>Carabus varians</i> F.-W.	ET
3.	<i>Notiophilus rufipes</i> Curtis	
4.	<i>Bembidion tibiale</i> Duft.	
5.	<i>Bembidion transcaucasicum</i> Lutsch.	ET
6.	<i>Bembidion</i> sp.	
7.	<i>Tachyta nana</i> Gyll.	
8.	<i>Ophonus parallelus</i> Dej.	
9.	<i>Harpalus rufipes</i> Deg.	
10.	<i>Harpalus affinis</i> Duft.	
11.	<i>Agonum dorsale</i> Pontop.	
12.	<i>Calathus melanocephalus</i> L.	
13.	<i>Prystonichus gratus</i> Mnnh.	EC
14.	<i>Pterostichus oblongopunctatus</i> F.	
15.	<i>Poecilus cupreus</i> L.	
16.	<i>Amara aenea</i> DeG.	
17.	<i>Chlaenius vestitus</i> Pk.	
18.	<i>Panagaeus cruxmajor</i> L.	
19.	<i>Badister bipustulatus</i> F.	
20.	<i>Brachinus crepitans</i> L.	
21.	<i>Brachinus explodens</i> Duft.	
2. Ընտանիք Dytiscidae		
22.	Platambus lunulatus F.	

	3. Ընտանիք Hydrophilidae	
23.	<i>Sphaeridium scarabaeoides L.</i>	
	4. Ընտանիք Histeridae	
24.	<i>Hister uncinatus Ill.</i>	
	5. Ընտանիք Leodidae	
25.	<i>Sciodrepoides watsoni Spenc.</i>	
	6. Ընտանիք Silphidae	
26.	<i>Nicrophorus vespilloides Hbst</i>	
27.	<i>Xylodrepa quadrimaculata Scop.</i>	
28.	<i>Silpha obscura L.</i>	
	7. Ընտանիք Staphylinidae	
29.	<i>Stenus sp.</i>	
30.	<i>Oxytelus sculpturatus Grav.</i>	
31.	<i>Oxyporus rufus L.</i>	
32.	<i>Aleochara sp.</i>	
33.	<i>Paederus fuscipes Curt.</i>	
34.	<i>Philonthus cf. splendens F.</i>	
35.	<i>Staphylinus chalconcephalus F.</i>	
36.	<i>Ocypus sp.</i>	
	8. Ընտանիք Lucanidae	
37.	<i>Lucanus ibericus Motsch.</i>	
38.	<i>Dorcus parallelipedus L.</i>	
	9. Ընտանիք Geotrupidae	
39.	<i>Geotrupes spiniger Marsh.</i>	
	10. Ընտանիք Scarabaeidae	
40.	<i>Heptaulacus carinatus Germ.</i>	
41.	<i>Colobopterus erraticus L.</i>	
42.	<i>Aphodius fimetarius L.</i>	

43.	<i>Esymus merdarius F.</i>	
44.	<i>Melinopterus prodromus Brahm</i>	
45.	<i>Calamosternus granarius L.</i>	
46.	<i>Copris lunaris L.</i>	
47.	<i>Paroniticellus fulvus Goeze</i>	
48.	<i>Onthophagus furcatus F.</i>	
49.	<i>Onthophagus taurus Schreb.</i>	
50.	<i>Onthophagus fracticornis Preyssl.</i>	
51.	<i>Caccobius schreberi L.</i>	
52.	<i>Hoplia pollinosa Kryn.</i>	EC
53.	<i>Blitopertha nigripennis Rtt.</i>	
54.	<i>Oxythyrea funesta Poda</i>	
55.	<i>Cetonia aurata L.</i>	
56.	<i>Protaetia ungarica armeniaca Mtsch.</i>	
57.	<i>Valgus hemipterus L.</i>	
	11. Ընտանիք Dascillidae	
58.	<i>Dascillus cervinus L.</i>	
	12. Ընտանիք Buprestidae	
59.	<i>Anthaxia hungarica sitta Scop.</i>	
60.	<i>Agrilus angustulus Ill.</i>	
61.	<i>Meliboeus parvulus Kust.</i>	
62.	<i>Coroebus rubi L.</i>	
	13. Ընտանիք Elateridae	
63.	<i>Agriotes sp.</i>	
	14. Ընտանիք Lampyridae	
64.	<i>Lampyris noctiluca L.</i>	
	15. Ընտանիք Cantharidae	
65.	<i>Cantharis melaspis Chevr.</i>	

66.	<i>Rhagonycha fulva Scop.</i>	
67.	<i>Rhagonycha caucasica Wittm.</i>	
	16. Ընտանիք Ptinidae	
68.	<i>Ptinus sp.</i>	
	17. Ընտանիք Cleridae	
69.	<i>Trichodes apiarius L.</i>	
	18. Ընտանիք Dasytidae	
70.	<i>Dasytes niger L.</i>	
	19. Ընտանիք Malachidae	
71.	<i>Anthocomus fasciatus L.</i>	
72.	<i>Malachius sp. 1</i>	
	20. Ընտանիք Nitidulidae	
73.	<i>Epuraea sp.</i>	
74.	<i>Glischrochilus latefasciatus Rtt.</i>	
75.	<i>Meligethes sp. 1</i>	
	21. Ընտանիք Monotomidae	
76.	<i>Rhisophagus bipustulatus F.</i>	
	22. Ընտանիք Cryptophagidae	
77.	<i>Cryptophagus sp.</i>	
	23. Ընտանիք Coccinellidae	
78.	<i>Propylea quatuordecimpunctata L.</i>	
79.	<i>Calvia quatuordecimguttata L.</i>	
80.	<i>Coccinella septempunctata L.</i>	
81.	<i>Adalia bipunctata L.</i>	
	24. Ընտանիք Mordellidae	
82.	<i>Mordellidae sp. 1</i>	
	25. Ընտանիք Tenebrionidae	
83.	<i>Crypticus quisquilius L.</i>	

84.	<i>Blaps lethifera pterotapha F.-W.</i>	
85.	<i>Omophilus caucasicus Kirsh.</i>	
86.	<i>Lagria hirta L.</i>	
	26. Ընտանիք Oedemeridae	
87.	<i>Oedemera podagrariae L.</i>	
88.	<i>Oedemera rostralis Rtt.</i>	
	27. Ընտանիք Meloidae	
89.	<i>Lytta vesicatoria L.</i>	
	28. Ընտանիք Ciidae	
90.	<i>Cis sp.</i>	
	29. Ընտանիք Chrysomelidae	
91.	<i>Clytra laeviuscula Ratz.</i>	
92.	<i>Cryptocephalus sericeus L.</i>	
93.	<i>Cryptocephalus hypochaeridis L.</i>	
94.	<i>Cryptocephalus moraei L.</i>	
95.	<i>Chrysolina herbacea Duft.</i>	
96.	<i>Galeruca tanaceti L.</i>	
97.	<i>Altica sp.</i>	
98.	<i>Phyllotreta sp.</i>	
99.	<i>Bruchidius sp. 1</i>	
100.	<i>Spermophagus sp.</i>	
	30. Ընտանիք Cerambycidae	
101.	<i>Rhagium fasciculatum Fald.</i>	EC
102.	<i>Dinoptera collaris L.</i>	
103.	<i>Pseudovadonia livida bicarinata Arnold</i>	
104.	<i>Stictoleptura tesserula Charp.</i>	
105.	<i>Stictoleptura tonsa Dan.</i>	
106.	<i>Strangalia attenuata L.</i>	

107.	<i>Leptura quadrifasciata caucasica</i> Plav.	EC
108.	<i>Leptura maculata</i> Poda	
109.	<i>Stenurella melanura</i> L.	
110.	<i>Stenurella bifasciata</i> Mull.	
111.	<i>Stenopterus rufus</i> L.	
112.	<i>Echinocerus floralis</i> Pall.	
113.	<i>Chlorophorus figuratus</i> Scop.	
114.	<i>Agapanthia persicola</i> Rtt.	
115.	<i>Phytoecia affinis boeberi</i> Gnglb.	EC
116.	<i>Phytoecia cylindrica</i> L.	
	31. Ընտանիք Apionidae	
117.	<i>Apion</i> sp. 1	
118.	<i>Apion</i> sp. 2	
	32. Ընտանիք Curculionidae	
119.	<i>Otiorrhynchus</i> sp.	
120.	<i>Urometopus georgicus</i> Rtt.	
121.	<i>Polydrusus inustus</i> Germ.	
122.	<i>Polydrusus mollis</i> Str.	
123.	<i>Sitona</i> sp.	
124.	<i>Larinus latus</i> Hbst	
125.	<i>Larinus sturnus</i> Schall.	
126.	<i>Cleonus tigrinus</i> Panz.	
127.	<i>Hylobius verrucipennis</i> Boh.	
128.	<i>Curculio glandium</i> March.	
129.	<i>Ceutorrhynchus</i> sp. 1	
130.	<i>Cionus hortulanus</i> Geoffr.	

* ET – Անդրկովկասի էնդեմիկ, EC - Կովկասյան էկոտարածաշրջանի էնդեմիկ

Հավելված 3

N	Տեսակներ	ՀՀ Կարմիր գիրք
Մողեսներ		
1	<i>Anguis colchica</i> Իլիկամողես	
2	<i>Darevskia dahli</i> Դալի ժայռային մողես	EN
3	<i>Lacerta agilis</i> Ճարպիկ մողես	
4	<i>Lacerta strigata</i> Շերտավոր մողես	
5	<i>Pseudopus apodus</i> Դեղնափորիկ	
Օձեր		
6	<i>Hemorrhois ravergieri</i> Բազմազույն սահնօձ	
7	<i>Natrix natrix</i> Սովորական լորտու	
8	<i>Natrix tessellata</i> Ջրային լորտու	

Հավելված 4

N	Տեսակներ	ՀՀ Կարմիր գիրք
1	<i>Alauda arvensis</i> Դաշտային արտույտ	–
2	<i>Anthus spinoletta</i> Լեռնային ձիաթռչնակ	–
3	<i>Anthus trivialis</i> Անտառային ձիաթռչնակ	–
4	<i>Apus apus</i> Սև մանգաղաթև	–
5	<i>Buteo buteo</i> Մեծ ճուռակ	–

6	<i>Buteo rufinus</i> Տափաստանային ճուռակ	--
7	<i>Carduelis cannabina</i> Կանեփնուկ	--
8	<i>Carduelis carduelis</i> Կարմրակատար	--
9	<i>Carduelis chloris</i> Կանաչ սերինոս	--
10	<i>Carpodacus erythrinus</i> Սովորական ոսպնուկ	--
11	<i>Cinclus cinclus</i> Ջրաճնճղուկ	--
12	<i>Columba livia</i> Թխակապույտ աղավնի	--
13	<i>Corvus corax</i> Արջնագոռավ	--
14	<i>Coturnix coturnix</i> Լոր	--
15	<i>Cuculus canorus</i> Սովորական կկու	--
16	<i>Erithacus rubecula</i> Արշալուսիկ	--
17	<i>Falco tinnunculus</i> Սովորական հողմավար բազե	--
8	<i>Fringilla coelebs</i> Ամուրիկ	--
19	<i>Garrulus glandarius</i> Անտառային կաչաղակ	--
20	<i>Lanius collurio</i> Շիկամեջք շամփրուկ (Ժուլան)	--
21	<i>Miliaria calandra</i> Կորեկնուկ	--
22	<i>Motacilla alba</i> Սպիտակ խաղտոնիկ	--
23	<i>Oenanthe oenanthe</i>	--
24	<i>Oriolus oriolus</i> Պիրոլ	--
25	<i>Parus caeruleus</i> Երկնագույն երաշտահավ	--
26	<i>Parus major</i> Մեծ երաշտահավ	--
27	<i>Passer domesticus</i> Տնային ճնճղուկ	--
28	<i>Passer montanus</i> Դաշտային ճնճղուկ	--
29	<i>Phoenicurus ochruros</i> Սևուկ կարմրատուտ	--
30	<i>Phoenicurus phoenicurus</i> Սովորական կարմրատուտ	--

31	<i>Pica pica</i> Սովորական կաչաղակ	–
32	<i>Picus viridis</i> Կանաչ փայտփոր	–
33	<i>Pyrrhula pyrrhula</i> Սովորական խաճկտիկ	–
34	<i>Saxicola torquatus</i> Սևագլուխ չքքան	–
35	<i>Sturnus roseus</i> Վարդագույն սարյակ	–
36	<i>Sylvia atricapilla</i> Սևագլուխ շահրիկ	–
37	<i>Sylvia communis</i> Սոխրագույն շահրիկ	–
38	<i>Troglodytes troglodytes</i> Եղնջաթռչնակ	–
39	<i>Turdus merula</i> Սև կեռնեխ	–
40	<i>Upupa epops</i>	–

Հավելված 5

N	Կարգ	Տեսակ	ՀՀ Կարմիր գիրք
1	Ոգնեկերպեր	<i>Erinaceus concolor</i> Սպիտակափոր ոգնի	
2	Միջատակերներ	<i>Crocidura leucodon</i> Սպիտակափոր սպիտակատամ	
3	Միջատակերներ	<i>Neomys teres</i> Շելկովնիկովի ջրային սրնչակ	EN B1a+2a
4	Միջատակերներ	<i>Sorex volnuchini</i> Կովկասյան փոքր գորշատամ	
5	Միջատակերներ	<i>Talpa levantis</i> Փոքր խլուրդ	
6	Ձեռքաթևավորներ	<i>Barbastella barbastellus</i> Եվրոպական լայնականջ	
7	Ձեռքաթևավորներ	<i>Eptesicus serotinus</i> Ուշաթռիչք մաշկեղ	
8	Ձեռքաթևավորներ	<i>Miniopterus schreibersi (pallidus)</i> Սովորական երկարաթև	VU B1ab (iii)+2ab(iii)
9	Ձեռքաթևավորներ	<i>Myotis aurascens (Myotis davidii)</i> Ոսկեգույն գիշերաչղջիկ	
10	Ձեռքաթևավորներ	<i>Myotis blythi</i> Սրականջ գիշերաչղջիկ	
11	Ձեռքաթևավորներ	<i>Myotis daubentonii</i> Դաուբենտոնիի գիշերաչղջիկ	
12	Ձեռքաթևավորներ	<i>Myotis emarginatus</i> Եռագույն գիշերաչղջիկ	
13	Ձեռքաթևավորներ	<i>Myotis mystacinus</i> Բեղավոր գիշերաչղջիկ	
14	Ձեռքաթևավորներ	<i>Myotis nattereri</i> Նատերերի գիշերաչղջիկ	
15	Ձեռքաթևավորներ	<i>Nyctalus leisleri</i> Փոքր իրիկնաչղջիկ	
16	Ձեռքաթևավորներ	<i>Nyctalus noctule</i> Շեկ իրիկնաչղջիկ	
17	Ձեռքաթևավորներ	<i>Pipistrellus kuhlii</i> Կուլիի փոքրաչղջիկ	
18	Ձեռքաթևավորներ	<i>Pipistrellus nathusii</i> Անտառային փոքրաչղջիկ	
19	Ձեռքաթևավորներ	<i>Pipistrellus pygmaeus</i> Գաճաճ փոքրաչղջիկ	
20	Ձեռքաթևավորներ	<i>Pipistrellus pipistrellus</i> Թզուկ փոքրաչղջիկ	
21	Ձեռքաթևավորներ	<i>Plecotus auritus</i> Գորշ ականջեղ	VU
22	Ձեռքաթևավորներ	<i>Rhinolophus hipposideros</i> Փոքր պայտաքիթ	
23	Ձեռքաթևավորներ	<i>Vespertilio murinus</i> Երկգույն մաշկեղ	
24	Կրծողներ	<i>Allactaga williamsi</i> Փոքրասիական ճագարամուկ	
25	Կրծողներ	<i>Apodemus uralensis</i> Փոքր անտառամուկ	
26	Կրծողներ	<i>Apodemus witherbyi</i> Դեղնափոր տափաստանամուկ	
27	Կրծողներ	<i>Arvicola terrestris</i> Եվրոպական ջրային դաշտամուկ	
28	Կրծողներ	<i>Cricetulus migratorius</i> Մոխրագույն համատերիկ	
29	Կրծողներ	<i>Ellobius lutescens</i> Անդրկովկասյան կուրամկնիկ	
30	Կրծողներ	<i>Mesocricetus brandti</i> Բրանդտի համատեր	
31	Կրծողներ	<i>Microtus (Terricola) majori</i> Թփուտային դաշտամուկ	
32	Կրծողներ	<i>Microtus arvalis</i> Սովորական դաշտամուկ	
33	Կրծողներ	<i>Mus musculus</i> Տնային մուկ	

34	Կրծողներ	<i>Rattus rattus</i> Սև առնետ	
35	Նապաստակակերպ	<i>Lepus europaeus</i> Գորշ նապաստակ	
36	Գիշատիչներ	<i>Canis aureus</i> Շնագայլ	
37	Գիշատիչներ	<i>Canis lupus</i> Գորշ գայլ	
38	Գիշատիչներ	<i>Felis silvestris</i> Եվրոպական անտառակատու	VU B1ab (iii)
39	Գիշատիչներ	<i>Martes foina</i> Քարակզաքիս	
40	Գիշատիչներ	<i>Meles meles</i> Գորշուկ	
41	Գիշատիչներ	<i>Mustela nivalis</i> Աքիս	
42	Գիշատիչներ	<i>Ursus arctos</i> Գորշ արջ	VU B1 b(iii)
43	Գիշատիչներ	<i>Vulpes Vulpes</i> Սովորական աղվես	

ք. Երևան

«23» հուլիսի 2020թ

«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129) այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս տնօրեն Վահե Մացակյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, որի անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս Կարեն Գյուլումյանը՝ ք. Երևան, Գալշոյան 14, բն 39 (անձնագիր՝ AN 0290541, տրված 10.12.2012թ., 005-ի կողմից) մի կողմից և «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպությունը (իրավաբանական հասցե՝ քաղաք Երևան, Ամիրյան փողոց շենք 12, բնակարան 29, գործունեության հասցե՝ ք. Վանաձոր Խորենացի 6/1) այսուհետ «Վարձակալ», ի դեմս նախագահ Արփինե Հակոբյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության անտառային և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքերը և Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահի պաշտոնակատարի 2020 թվականի հուլիսի 10-ի N 1-08/09 գրությունը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրին համապատասխան՝ Վարձատուն պարտավորվում է համապատասխան վարձավճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր օգտագործմանը հանձնել 0,0441 հա մակերեսով՝ սույն պայմանագրի 1.2. կետում նշված անտառային հողը:
- 1.2. Անտառային հողը գտնվում է «Դսեղի անտառտնտեսություն» մասնաճյուղի Դսեղի անտառապետության տարածքում (Լոռու մարզ, համայնք Դսեղ 4-րդ փողոց 95 հողամաս, վկայական՝ N 05032020-06-0041):
- 1.3. Պայմանագրի 1.2 կետում նշված անտառային հողը տրամադրվում է հանգստի և զբոսաշրջության կազմակերպման նպատակով:
- 1.4. Անտառային հողի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի՝ հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:
- 1.5. Սույն պայմանագրի գործողության ընթացքում անտառային հողի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:
- 1.6 Սույն պայմանագիրը կնքելու պահին անշարժ գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 20 հուլիսի 2020թ. տրված N ՄՏ-20072020-06-0166 միասնական տեղեկանքի:

2. Պայմանագրի գործողության ժամկետը և վարձավճարը

- 2.1. Սույն պայմանագիրը կնքվում է 20 (քսան) տարի ժամկետով և գործում է մինչև 23 հուլիսի 2040 թվականը:
- 2.2. Վարձավճարի չափը կազմում է ամսական 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ, տարեկան ընդամենը 24.000 (քսանչորս հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:
- 2.3. Վարձավճարը մուծվում է ամեն օրացուցային ամիս՝ հավասար չափերով, այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ից ոչ ուշ: Առաջին ամսվա համար սահմանված գումարի վճարումը կատարվում է կանխավճարի կարգով, ոչ ուշ, քան Պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրվա ընթացքում: Պայմանագրով սահմանված վերջին ամսվա համար

վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև Պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 10-ը:

2.4. ՀՀ իրավական ակտով /ակտերով/ սահմանված կարգով և հիմքով վարձավճարի փոփոխման դեպքում Վարձատուն պարտավոր է դրա մասին նախօրոք գրավոր տեղյակ պահել Վարձակալին: Վարձավճարը չի փոփոխվում, եթե Վարձակալը մինչև համապատասխան 10-օրյա ժամկետի ավարտը սույն պայմանագրի 5.3-րդ կետով նախատեսված կարգով վարձատուին ծանուցել է պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին:

Վարձավճարի փոփոխման վերաբերյալ փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում Կողմերը կարող են դադարեցնել պայմանագիրը՝ սույն պայմանագրի 5.3-րդ կետով նախատեսված կարգով:

2.5. Պայմանագրով նախատեսված վճարումները Վարձակալի կողմից ենթակա է վճարման N 1 գանձապետական բաժանմունքի h/h 900018002270 «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հաշվեհամարին: Վարձատուն նշված հաշվի համարի կամ վճարումների կատարման կարգի փոփոխման մասին նախապես տեղյակ է պահում Վարձակալին:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Վարձատուն իրավունք ունի՝

3.1.1. Վարձակալից պահանջել Անտառային հողն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան, պահպանել դրա օգտագործման նկատմամբ ՀՀ անտառային օրենսդրության պահանջները, իրականացնել դրա բարելավմանն ուղղված միջոցառումներ:

3.1.2. Վարձակալի կողմից վարձակալական վճարի վճարման ժամկետների խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծել վարձավճարը, ինչպես նաև տուժանք՝ սույն պայմանագրով սահմանված չափով:

3.1.3. Եթե Վարձակալը Անտառային հողից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան՝ պահանջել լուծել պայմանագիրը և հատուցել վնասները:

3.1.4. պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով Վարձակալի կամ նրա ներկայացուցչի հետ միասին մուտք գործել Անտառային հող՝ չխոչընդոտելով Վարձակալի բնականոն գործունեությանը:

3.1.5. ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված դեպքում ու կարգով վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ այդ մասին 30 օր առաջ տեղեկացնելով Վարձակալին:

3.1.6. հողամասի վարձակալության պայմանագիրը դադարեցվելուց հետո իր հայեցողությամբ տնօրինելու Վարձակալի կողմից թողնված հողի բարելավումները և ամրակայված գույքը:

3.1.7. օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.2. Վարձատուն պարտավոր է՝

3.2.1. չմիջամտել Վարձակալի գործունեությանը, եթե այդ գործունեությունը վնաս չի պատճառում Անտառային հողերին, շրջակա միջավայրին և չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

3.2.2. Վարձավճարի փոփոխման, ինչպես նաև երրորդ անձանց իրավունքների մասին գրավոր ծանուցել Վարձակալին:

3.2.3. Առանց Վարձակալի մեղքի առաջացած աղետի դեպքում անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել դրա հետևանքների վերացման գործում:

3.3. Վարձակալն իրավունք ունի՝



3.3.1. Անտառային հողն օգտագործել դրա նշանակությանը և պայմանագրի պայմաններին համապատասխան.

3.3.2. ինքնուրույն տնօրինել Անտառային հողի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները.

3.3.3. Անտառային հողի օգտագործման նշանակությանը և սույն պայմանագրին համապատասխան իրականացնել բաժանելի բարելավումներ.

3.3.4. միայն Վարձատուի համաձայնությամբ և նրա կողմից սահմանված պայմաններով ու ժամկետներում Անտառային հողը ենթավարձակալության հանձնել երրորդ անձին.

3.3.5. օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.4. Վարձակալը պարտավոր է՝

3.4.1. անտառային հողն օգտագործել դրա նշանակությանը, անտառօգտագործման ծրագրին և պայմանագրի պայմաններին համապատասխան, թույլ չտալ վարձակալած հողամասի բնական վիճակի վատթարացում,

3.4.2. ժամանակին և սույն պայմանագրով սահմանված կարգով մուծել վարձավճարը.

3.4.3 սույն պայմանագրի 2.4-րդ և 3.2.2. կետով նախատեսված կարգով տեղեկացվելու օրվան հաջորդող տասներորդ օրվանից սկսած վճարել նոր վարձավճարի չափը և Վարձատուի հետ կնքել համապատասխան փոփոխությամբ պայմանագիր.

3.4.4 թույլ չտալ Անտառային հողի որակական բնութագրերի, բնապահպանական վիճակի վատթարացում, չկատարել անբաժանելի բարելավումներ.

3.4.5 պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով ապահովել իր կամ իր ներկայացուցչի հետ միասին Վարձատուի ազատ մուտքը Անտառային հող.

3.4.6. ցանկացած բաժանելի բարելավում իրականացնել վարձատուի համաձայնությամբ, ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» N 896-Ն որոշմամբ և իրավական այլ ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.4.7. անտառային հողն օգտագործել իր կողմից ներկայացված անտառօգտագործման ծրագրին և ժամանակացույցին համապատասխան, դրանց իրականացման վերաբերյալ տարեկան մեկ անգամ ներկայացնել հաշվետվություն.

3.4.8. ապահովել անտառային հողից աղբահանության իրականացումը.

3.4.9. ապահովել քաղաքացիների ազատ մուտքն անտառային տարածք.

3.4.10. ապահովել սույն պայմանագրով հատկացված անտառների պահպանությունը անտառային օրենսդրությամբ սահմանված խախտումներից.

3.4.11. պայմանագրի դադարեցման դեպքում միջոցներ ձեռնարկել իր կողմից հողի վրա կատարված բաժանելի բարելավումները հանելու, առանց վարձատուի համաձայնության իր կողմից հողի վրա կատարված բաժանելի բարելավումները վարձատուի պահանջով թողնելու կամ վերացնելու միջոցով հողամասը ժամանակին ազատելու համար:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրով սահմանված ժամկետներում վճարումները չկատարելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար Վարձակալը վճարում է տուժանք՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով, բայց ոչ ավել քան տարեկան վարձավճարի դրույքաչափը:

4.2. Պայմանագրով սահմանված տուժանքի վճարումը վարձակալին չի ազատում պարտավորությունների հետագա կատարումից և խախտումների վերացման պարտականությունից:

4.3. Եթե Վարձակալը Պայմանագիրը դադարելուց հետո շարունակում է օգտվել Պայմանագրով սահմանված Անտառային հողից կամ անտառային հողից օգտվելը

դադարեցրել է Պայմանագրով սահմանված ժամկետի խախտմամբ, ապա վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել Վարձակալի կողմից Անտառային հողից օգտվելու ամբողջ ժամանակահատվածի համար:

5. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

- 5.1. Սույն պայմանագիրը կարող է Վարձատուի կողմից միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե՝ Վարձակալը՝
- 5.1.1. Անտառային հողն օգտագործել է սույն Պայմանագրի պայմանների կամ Անտառային հողի նշանակության էական կամ բազմակի խախտումներով
 - 5.1.2. էականորեն վատթարացրել է Անտառային հողի վիճակը.
 - 5.1.3. Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երեք ամսից ավելի չի մուծել վարձավճարը:
- 5.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝
- 5.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Անտառային հողը կամ խոչընդոտներ է ստեղծել Անտառային հողից Պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտվելու հարցում:
 - 5.2.2 Վարձակալին հանձնված Անտառային հողն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս:
- 5.3. Սույն պայմանագիրը կարող է դադարեցվել կողմերից մեկի նախաձեռնությամբ օրենքով սահմանված հիմքով՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

6. Այլ դրույթներ

- 6.1. Սույն պայմանագրի պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո:
- 6.2. Վարձակալած Անտառային հողում Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:
- 6.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը լուծվում է դատական կարգով:
- 6.4. Սույն պայմանագրի վարձավճարը չի կարող փոփոխվել ավելի, քան տարին մեկ անգամ:
- 6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
- 6.6. Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, պայմանագրի կնքման պահից 30-օրյա ժամկետում:
- 6.7. Սույն պայմանագրի կնքման և դրանից բխող իրավունքների գրանցման ծախսերը կատարում է Վարձակալը:
- 6.8. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասարազոր 4 օրինակից:



7. Կողմերի գտնվելու վայրը, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու

«Հայանտառ» ՊՈԱԿ
ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՎՀՀ 02512343
հ/հ 900018002270
N 1 գանձապետական բաժանմունք

Վարձակալ

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական
հասարակության զարգացման ՀԿ
իրավ. հասցե՝ ք. Երևան, Ամիրյան փ.,
շենք 12, բն. 29
գործ. հասցե՝ ք. Վանաձոր Խորենացի 6/1
ՀՎՀՀ 02577713
հ/հ 2471704956310020
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, Վանաձորի մ/ճ

Տնօրեն

Վ. Մացակյան



Նախագահ

Ա. Հակոբյան



Իրազ. ակտ. Գ. Գրյուն & Գրյուն Գրյունյան



Նոտարական ակտի կոդ: 779-20200723-37-4634652
Նոտարական ակտի գաղտնագիր: SBMVD2



**ԱՆՇԱՐԺ ԳՈՒԹՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՂԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԶԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐԱՊԵՏԱՐԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՉԱՐ ԶՍԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ ԶՍԱՆԵՐԵՔԻՆ**

Սույն պայմանագիրը վավերացված է իմ **ԵՐԵՎԱՆ** նոտարական տարածքի նոտար **ԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ ԴԱՉԱՐՅԱՆԻ** կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, անշարժ գույքի նկատմամբ վարձատուի իրավունքները ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակում 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է գրանցամատյանում

3218

Գանձված է պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար

Աննա Լևոնի Դաչարյան

A handwritten signature in blue ink, appearing to read 'Anna Levonich Datcharyan', written over a faint circular notary seal.

